Ազգ
Azg
6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 218(5070)
ISSN: 1829-1651

# Դուբլինը՝ Նալբանդյան-Մամեդյարով հանդիպման նոր վայր

**Իռլանդիայի մայրաքաղաք Դուբլինում այսօր մեկնարկում է ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի նիստը, որին մասնակցելու նպատակով Իռլանդիա է մեկնել Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը:**

**Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ Նալբանդյանը ելույթ է ունենալու ԱԳ նախարարների խորհրդում, ինչպես նաեւ «նախատեսված են մի շարք երկկողմ հանդիպումներ»: Նույնաբովանդակ մամուլի հաղորդագրություն էլ տարածել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը, որի կայքէջի համաձայն՝ ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովը, որը Իռլանդիայում կլինի դեկտեմբերի 5-7-ը, երկկողմ ու բազմակողմ հանդիպումներ է ունենալու:**



**Որ Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գերատեսչությունների ղեկավարները հանդիպելու են Դուբլինում, ոչինչ չի նշվում, սակայն ակնհայտ է, որ այդպիսի հանդիպում առնվազն նախատեսվում է:**

**Յուրաքանչյուր տարի այս ձեւաչափով են ԵԱՀԿ տարածաշրջանի արտգործնախարարները անդրադառնում ընդհանրական օրակարգին ու նաեւ բազմակողմ, երկկողմ հարաբերություններ ունենում, ինչն էլ օգտագործվում է նաեւ Հայաստան-Ադրբեջան ԱԳ նախարարների մակարդակով հանդիպումների անցկացման համար: Ավելին, մինչ օրս էլ շրջանառվող «Մադրիդյան սկզբունքներն» էլ առաջին անգամ արտգործնախարարներին ներկայացվել են նույն՝ ԵԱՀԿ Նախարարական խորհրդի շրջանակներում կազմակերպված հանդիպումների ժամանակ՝ 2007-ին Մադրիդում:**

**Այս տարի էլ սպասվում է տարբեր փաստաթղթերի ընդունում, որոնցում ամենայն հավանականությամբ ղարաբաղյան թեման չի շրջանցվի: Իսկ թե ի՞նչ կներկայացվի Հայաստանի ու Ադրբեջանի արտգործնախարարներին, թերեւս հստակեցված էր ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վերջին տարածաշրջանային այցելության ընթացքում՝ նոյեմբերի 19-26-ը: Իսկ այցելության ավարտին արված հայտարարության համաձայն՝ արտգործնախարարների հանդիպումը առայժմ միակ ակնկալվող գործընթացն է՝ բանակցությունների շարունակականության առումով այն դեպքում, երբ նախագահների մակարդակով դեռեւս պլաններ չկան:**

**«Նախագահներ Սարգսյանի եւ Ալիեւի հետ համանախագահները վերանայել են օգոստոսին եւ սեպտեմբերին արտգործնախարարներ Նալբանդյանի ու Մամեդյարովի հետ ունեցած առանձին-առանձին հանդիպումների արդյունքները եւ քննարկել են խաղաղ գործընթացի շարունակման գաղափարները, որ ներկայացվել են հոկտեմբերի 27-ին նախարարների համատեղ հանդիպմանը», տեղեկացնում էր ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարությունը, փաստացի վկայելով, որ արտգործնախարարական հանդիպումների արդյունքների վերանայումը ոչ մի արդյունք էլ չի տվել ու նախագահների մակարդակով հանդիպում չի պլանավորվում:**

**Դրա փոխարեն մնում է ենթադրել, որ Դուբլինում կարող են քննարկումներ լինել հենց քլինթոնյան հայտարարությամբ հավերժացած «նոր գաղափարների» առնչությամբ, կամ էլ դրանք կվերաձեւակերպվեն որպես դուբլինյան:**

**Վ. ՊՈՂՈՍՅԱՆ**

# Եվրասիական միության հետ Հայաստանի հարաբերվելն անխուսափելի՞ է

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2013 թվականի բյուջեի ընդունումը երեկ Ազգային ժողովում որեւէ դժվարության չհանդիպեց: Չնայած 4 խմբակցություն «դեմ» քվեարկեց, սակայն «դեմ» քվեներն ընդամենը 37-ն էին, իսկ «կողմ» քվեարկեց 71 պատգամավոր: Ընդ որում՝ բացակա պատգամավորները շատ քիչ էին: Քվեարկությունից եւ ԱԺ-կառավարություն հարցուպատասխանից հետո վարչապետ **Տիգրան Սարգսյանը** շփվեց լրագրողների հետ եւ, կարելի է ասել, որ նա կարծես հատուկ չէր ուզում շրջանցել որեւէ հարց՝ դե, բյուջեն հեշտուհանգիստ ընդունվել էր, ու հավանաբար վարչապետի տրամադրությունը տեղն էր: Սակայն լրագրողների բոլոր ջանքերը՝ վարչապետից ինչ-որ գնահատական պոկել ԲՀԿ-ի՝ վարչապետին ուղղված քննադատության, այդ քաղաքական ուժի հավակնությունների կամ Բրյուսել այցի վերաբերյալ, որեւէ արդյունք չտվեցին՝ վարչապետը խորհուրդ էր տալիս վերաուղղել հարցերն այդ քաղաքական ուժին: «**Ազգի**» հարցին, թե նոր ընդունված բյուջեն գուցե այլ կառավարության բաժին ընկնի նախագահական ընտրություններից հետո, վարչապետի պատասխանն ի վերջո այն էր, թե ինքն անփոխարինելի չէ, եւ Հայաստանում շատերը կան, որ կհավակնեն վարչապետի աթոռին:

Սակայն մենք ավելի հարմար ենք գտնում ներկայացնել ոչ թե այս ճեպազրույցներում մշտական հնչող հարցերին վարչապետի մշտական պատասխանները, այլ ԱԺ դահլիճում ազատդեմոկրատական Խաչատուր Քոքբեյանի՝ եվրասիական միության եւ եվրոինտեգրման զուգահեռ գործընթացների վերաբերյալ հարցին վարչապետի պատասխանը, որը կարծում ենք դեռ շատ մեկնաբանությունների կարժանանա:

*Տես էջ 2*

# Հակասիրիական կոալիցիայի մասնակիցները հայտնի են

*«Փեթրիոթները» կտեղաբաշխվեն առաջիկա շաբաթներին*

Լոնդոնի «Թայմս» թերթը հաղորդում է, որ Իսրայելը կմասնակցի Սիրիայի նախագահ Բաշար Ասադի վարչակարգի դեմ ռազմական գործողություններին, եթե Ասադը քիմիական զենք օգտագործի ապստամբների դեմ: Թերթի տեղեկությունների համաձայն, միջազգային հակասիրիական կոալիցիայի կազմում ընդգրկված են նաեւ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Թուրքիան եւ Հորդանանը:

Ամերիկացի մի բարձրաստիճան պաշտոնյա թերթին հայտնել է, որ Վաշինգտոնն ու Լոնդոնը մշակել են ռազմական գործողության ծրագիր, որի նպատակն է վերահսկողություն հաստատել Սիրիայի զանգվածային բնաջնջման զենքի նկատմամբ:

*Տես էջ 5*




# «Խնդրողական» Ադրբեջան. բայց ինչո՞ւ են իրենք էլ հերքում

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

ԵԱՀԿ Մինսկի խմբի տարածաշրջանային այցից բավական ժամանակ անց «իլհամպրոպ»-ը վերստին «ոգեկոչել է» սեփական քարոզչամեքենան: Կրկին ասպարեզում է «հայտնի քաղաքագետ» եւ Միլլի մեջլիսի պատգամավոր Ռասիմ Մուսաբեկովը: Նրա կարծիքով, «համանախագահները նոր գաղափարներ, համենայն դեպս, ունեցել են... Դատելով Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովի հայտարարությունից՝ հայկական կողմը չի ընդունել համանախագահների նոր գաղափարները, ուստի եւ դրանք չեն բացահայտվել»:

Այն ֆոնին, որ Ադրբեջանը տարիներ ի վեր «քննադատում է» միջնորդներին, Մուսաբեկովի ասածը չափազանց արտառոց է հնչում. ինչո՞ւ ափսոսալ «նոր գաղափարները հայկական կողմից չընդունվելու համար», եթե պաշտոնական Բաքուն ընդհանրապես «անարդյունավետ է» որակել Մինսկի խմբի հովանու ներքո բանակցությունները: Չի՞ նշանակում սա, արդյոք, որ Ադրբեջանի «հարձակողական» արտաքին քաղաքականությունը ոչ այլ ինչ է, քան՝«բլեֆ»: Ընդ որում՝ հասցեագրած սեփական հանրությանը, իսկ իրականում Իլհամ Ալիեւը պարզապես ձգտում է ինչ-որ ձեւով դեմք փրկել:

Սա միայն ենթադրություն չէ: Ադրբեջանական դիվանագիտությունը, տվյալ դեպքում՝ խորհրդարանական մակարդակով, ինքն է ընկնում հակասությունների մեջ: Մամուլի դիտարկմանը, թե «խնդրի կարգավորման հետաձգման պայմաններում «սեպարատիստական ռեժիմը» (ԼՂՀ իշխանությունները- Վ. Ա.) մտադիր է «Խոջալուի» (չակերտները մերն են- Վ. Ա.) օդանավակայանից միջազգային թռիչքներ իրականացնել», Մուսաբեկովը տալիս է այսպիսի մեկնաբանություն. «...Պատկերացրեք, որ Արեւմուտքը եւ ԱՄՆ-ը ցանկանան իրանական խնդիրը լուծել ռազմական ճանապարհով, իսկ նույն ժամանակ Ադրբեջանի «օդային տարածքը» (չակերտները մերն են- Վ. Ա.) հատեն ԼՂՀ օդանավերը: Ո՞վ է երաշխիք տալիս, որ դրանք մարտական գործողությունների ժամանակ չեն խփվի: Ո՞վ է դրա համար պատասխան տալու»:

*Տես էջ 8*

# Աշխարհի վերջի այդ մեկ հատիկ օրը

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

Այնուամենայնիվ, ինչպես է բացվելու դեկտեմբերի 21-ի առավոտը. յուրաքանչյո՞ւր անգամվա պես, ինչպես սովոր ենք ձմռան այս ամսվա բնությանը՝ սառը լույսի աղոտ լուսավորությա՞մբ, թե՞...

Բնության ներքին կյանքը ընթանում է անխաթար օրինաչափությամբ, հակառակը՝ մարդկային միտքն ու հոգին անկանխատեսելի փոփոխական են, օրինաչափության չենթարկվող: Հավատացյալներին, նաեւ սկեպտիկներին դաժան փորձություն է սպասվում այդ օրը, թեեւ տագնապը թերեւս սողոսկի ամենաանհավատի մեջ անգամ: Պատճառը լրատվամիջոցների էջերում, հեռուստահաղորդումներում, ինտերնետային կայքերում սփռված ամենատարբեր՝ հաճախ պսեւդոգիտական հաղորդումներն ու ֆիլմերն են: Ամենաազդեցիկները հոլիվուդյան կինոարտադրողների հայտնի մի քանի ֆիլմերն են, որոնք որոշ դեպքերում նույնիսկ հոգեկան ցնցում առաջացրեցին: Վախի ու անորոշության զգացումներ ծնեց լայն շրջանառության մեջ դրված մայաների օրացույցի՝ աշխարհի վերջի կանխատեսման որոշակի տարեթիվը:




Մարդկանց մեջ կասկածի սերմերն ավելի խորացրին մի քանի հեղինակավոր հեռուստաընկերությունների (Discovery, НТВ, REN TV եւ այլ) հաղորդումները՝ լուրջ մասնագետների, գիտնականների, տիեզերագնացների, հոգեբանների, մտավորականների, անգամ շամանների մասնակցությամբ: Նման հաղորդումների ռեյտինգն ապահովում էին թեմայի խիստ հետաքրքրականությունը եւ մասնակիցների՝ հաճախ համոզիչ, տրամաբանական փաստարկումները: Վերջերս Discovery հեռուստաալիքի հաղորդումներից մեկը ներկայացնում էր մեր մոլորակի կործանման հնարավոր 4 եղանակները՝ գիտական հիմնավորումներով, մանրամասն մեկնաբանություններով, ուղեկցվող տեսանյութով: Նկարագրվում էին յուրաքանչյուրի (հզոր ցունամի, ահեղ երկրաշարժ, երկնային մարմնի բախում) բերած աղետի հավանական չափը եւ մարդկային կորուստների մոտավոր քանակը:

*Տես էջ 3*

# Ծառատունկ՝ պոչամբարի վրա

Դեռ մի քանի տարի առաջ Ախթալայի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու ուխտավորները վանական համալիրի ներքեւի հատվածում նկատում էին գորշավուն ստվար մի հատված: Խոսքը Ախթալայի լեռնահարստացման կոմբինատին (այսուհետեւ՝ ԼՀԿ) պատկանող «Նազիկ» պոչամբարի



Գնել Նազանյան

մասին է: Բայց դա մի քանի տարի առաջ էր, այսօր պոչամբարը ունի գրեթե բոլոր հնարավորությունները անտառի վերածվելու համար: Մի քանի ամիս առաջ Ախթալայի ԼՀԿ-ն հիշյալ պոչամբարի հատվածում կատարել էր հողալցման աշխատանքներ: Ըստ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի՝ եթե տարածքը այլեւս որպես պոչամբար չի օգտագործվում, ապա պետք է տվյալ հատվածում կատարվեն ռեկուլտիվացիոն, հողալցման աշխատանքներ, նպատակ ունենալով կամ դարձնել օգտագործելի, կամ վերականգնել խախտված հողերի տեսքը:

Վերոնշյալ օրենսգիրքը հաշվի առնելով՝ վերջերս Ախթալայի ԼՀԿ-ն կազմակերպել էր ծառատունկ հենց «Նազիկ» պոչամբարի տարածքում: Մեզ հետ զրույցում Ախթալայի ԼՀԿ-ի տնօրենի ընդհանուր հարցերի գծով տեղակալ **Գնել Նազանյանը** տեղեկացրեց, որ Եվրոմիության «Թափոնների կառավարում- ԵՀԳԳ՝ Արեւելք» տարածաշրջանային ծրագրով կատարված ծառատունկը կազմակերպել է մարզպետարանը, իսկ տնկիների ձեռքբերմանն աջակցել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կլիմայի փոփոխության գրասենյակը, որն էլ իրականացնելու է տարածքի հետագա մոնիտորինգը:

«Մինչեւ ծառատունկը Ախթալայի ԼՀԿ-ին պատկանող



«Նազիկ» պոչամբարի ներքին շերտից (պոչամբարային զանգվածից) վերցվել էր նմուշ եւ ուղարկվել ագրոքիմիկական փորձաքննության: Այդ փորձաքննության արդյունքների վերլուծության հիման վրա էլ որոշվել է տնկվող ծառերի տեսակները՝ հացենի, կեչի, թխկի, շուրջ 14 ծառատեսակ եւ 700 տնկի», հավելեց պրն Նազանյանը:

Ծառատունկը իրականացնելու կազմակերպելու համար մեծ է եղել ԼՀԿ-ի դերակատարումը, որը տրամադրել է եւ անհրաժեշտ տեխնիկա, իսկ լեռնահարստացման կոմբինատի աշխատողներից ներգրավելով ծառատունկին:

«Ծառատունկից հետո մեր հաջորդ խնդիրը «Նազիկ» պոչամբարի տարածքում ոռոգման ցանցի ստեղծումն է, որի պատրաստման աշխատանքները սկսված են, իսկ գարնանը, երբ ծառերը ոռոգելու հարկ կլինի, կունենանք որոշակի արդյունքներ»,- նշում է Գնել Նազանյանը:

Եվրոմիության «Թափոնների կառավարում» ծրագիրը անցկացվում է 4 տարին մեկ անգամ 7 երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, մոնիտորինգային սկզբունքով:

Բացի բնապահպանական տեսակետից, նման միջոցառումը նպատակ ունի նաեւ ուսումնասիրելու հողածածկ պոչամբարների փորձնական կանաչապատումը, ինչն էլ կարող է հիմք դառնալ պոչամբարների ռեկուլտիվացիոն նոր համակարգի ստեղծման համար: Չի բացառվում նաեւ, որ հիշյալ մեթոդն իր գործնական կիրառությունը կարող է գտնել ոչ միայն Հայաստանում, այլեւ ուրիշ երկրներում եւս:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ

# Թուրքիան՝ Հայոց ցեղասպանության մասին, նույնն է, ինչ նեոնացիստները կազմակերպեն ցուցահանդես Հոլոքոստի մասին

Թուրքական ժխտողականությունը երբեմն արտառոցության աստիճանի է հասնում՝ Հայոց ցեղասպանության հարցի որեւէ բարձրաձայնում լռեցնելու հետեւողական փորձերի անհաջողության ֆոնին: Երբեմն ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ ինչ-որ երեւույթի «չգոյության» մասին թուրքական նախաձեռնություն է ի հայտ գալիս, ու, բնականաբար, չի արժանանում դրական արձագանքի:

Կոպենհագենում լույս տեսնող դանիական պարբերականներից մեկի՝ Berlinske օրաթերթի դեկտեմբերի 4-ի հրապարակումը երկրի հասարակական-քաղաքական շրջանակներում դարձել է վերջին երկու օրվա ամենաքննարկվող թեմաներից մեկը: Հոդվածում ներկայացվել է «Հայոց ցեղասպանությունը եւ սկանդինավյան արձագանքը» խորագրով ժամանակավոր ցուցադրության բացմանը Դանիայում Թուրքիայի դեսպանության կողմից Կոպենհագենի Թագավորական գրադարանին ուղղված առաջարկի մասին հայտարարությունը՝ անցկացնելու ցուցադրություն «այսպես կոչված Հայոց ցեղասպանությունը» անվանումով:

Հոդվածում մեջբերված են տարբեր դիրքորոշումներ ու կարծիքներ այդ առնչությամբ: Մասնավորապես, «Ժողովրդական կուսակցության» արտաքին հարցերով խոսնակ **Սորեն Էսպերսենի** կարծիքով, նման ցուցադրություն անցկացնելը նույնն է, ինչ նեոնացիստները կազմակերպեն ցուցահանդես Հոլոքոստի մասին:

Դանիացի նշանավոր պատմաբան, ցեղասպանագետ **Մաթիաս Բյոնելունդը** եւս արտահայտել է իր մոտեցումը, ակնարկելով, որ եթե թույլատրվի Թուրքիայի դեսպանության նախաձեռնությունը, Կոպենհագենի Թագավորական գրադարանը, որպես գիտական հաստատություն, հավասարեցնում է պատմության մեջ այդ երկու երկրների դիրքը: Ըստ Բյոնելունդի, Հայոց ցեղասպանությունը իրականություն է, եւ դրա որեւէ այլ մեկնաբանություն գիտական չէ:

Հոդվածում մեջբերված է նաեւ Դանիայում Հայաստանի դեսպան **Հրաչյա Աղաջանյանի** խոսքը, որում նա հույս է հայտնում, որ Կոպենհագենի Թագավորական գրադարանը տեղի չի տա Թուրքիայի դեսպանության հնարավոր ճնշումներին եւ չի կազմակերպի նման անվանումով որեւէ միջոցառում:

Ըստ մամուլի հրապարակումների՝ Դանիայի խոշոր ընդդիմադիր Venstre (ազատական) կուսակցությունը եւս պահանջել է երկրի մշակույթի նախարարից թույլ չտալ Կոպենհագենի Թագավորական գրադարանում նման միջոցառման անցկացումը:

Վ. Պ.

# Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանը՝ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի թեմի առաջնորդ

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությամբ Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանը, ազատվելով Կենտրոնական Եվրոպայի եւ Շվեդիայի հայրապետական պատվիրակի պարտականություններից, 2013 թվականի հունվարի 1-ից նշանակվել է Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ:

Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանը (ավազանի անունը՝ Վրեժ) ծնվել է 1952 թ. Հալեպում:

2000-2002 թթ. եղել է Դալլասի Ս. Սարգիս եկեղեցու հոգեւոր հովիվ, իսկ 2002-2007 թթ՝ Ֆիլադելֆիայի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցու հոգեւոր հովիվ: 2002-2010 թթ. նաեւ պաշտոնավարել է որպես ԱՄՆ Արեւելյան թեմի առաջնորդական փոխանորդ, 2010թ. նշանակվել Կենտրոնական Եվրոպայի եւ Շվեդիայի հայրապետական պատվիրակ:

2011 թ. նոյեմբերի 6-ին ձեռամբ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի ստացել է եպիսկոպոսական օծում եւ ձեռնադրություն:

# Եվրասիական միության հետ Հայաստանի հարաբերվելն անխուսափելի՞ է

*1-ին էջից*

Վարչապետը նշեց, որ մեր պետության համար երկու կարեւոր ռազմավարական ուղղությամբ իշխանությունն աշխատում է՝ դրանք ինտեգրացիոն գործընթացներ են ԱՊՀ (եվրասիական) եւ Եվրոմիության շրջանակներում: Վարչապետը չի դիտարկում դրանք որպես իրար հակասող ընթացքներ, այլ՝ փոխլրացնող գործընթացներ. «Մասնավորապես՝ մենք ստորագրեցինք եւ Ազգային ժողովը վավերացրեց Ազատ առեւտրի համաձայնագիրը ԱՊՀ երկրների հետ, որը հնարավորություն է տալիս ՀՀ տնտեսավարող սուբյեկտներին ազատորեն գործարքներ իրականացնել ԱՊՀ այն երկրների շրջանակում, ովքեր որ ստորագրել են այդ պայմանագիրը: Եւ այսօր մենք բանակցություններ ենք վարում Եվրոմիության հետ խորը եւ համապարփակ ազատ առեւտրի շրջանակներում՝ այդ համաձայնագրին միանալու նպատակով, որը նույնպես սահմանում է նմանատիպ ռեժիմներ: Եվ այն, որ մենք ԱՊՀ-ի հետ արդեն ունենք նման համաձայնագիր ու ԱԺ-ն այն վավերացրել է՝ ամենեւին չի խոչընդոտում եւ չի հակասում այն բանակցային գործընթացին, որը մենք պաշտոնապես սկսել ենք այսօր Եվրոմիության հետ: Տեղյակ եք, բանակցությունները սկսվել են փետրվարին, մենք երկու ռաունդ իրականացրել ենք, եւ նպատակ ենք դնում, որպեսզի 2013 թվականին ավարտենք բանակցությունները, թեեւ նախատեսված է դրանք ավարտել 2014-ին»:

Եվրասիական միության շրջանակներում նույնպես վարչապետի կարծիքով անհրաժեշտ է երկխոսություն եւ համագործակցություն, քանի որ սա նոր ձեւավորվող միություն է, եւ դեռեւս քննարկումներ են գնում, թե ապագայում ինչ ձեւաչափերով է լինելու համագործակցությունը: Քանի որ Ռուսաստանի Դաշնությունը, Ղազախստանը, Բելառուսը իրենց լիազորություններից մի զգալի մաս արդեն զիջել են նոր ձեւավորված Մաքսային միությանը եւ Եվրասիական հանձնաժողովին, դա նշանակում է , որ տնտեսական հարցերի շուրջ երկկողմ բանակցություններ սկսելիս այդ երկրների հետ հղում է կատարվում: Ստացվում է, որ բազմաթիվ հարցեր տվյալ երեք երկիրը չի կարող երկկողմանի ֆորմատով Հայաստանի հետ քննարկել, այդ հարցերը պետք է քննարկվեն նոր ձեւավորվող եվրասիական ֆորմատի հետ:

Ահա այս նոր իրողությունները երեկ հասցրեց հանրությանն իր պատասխանելով, փաստորեն նշելով Եվրասիական միության հետ Հայաստանի հարաբերվելու անխուսափելիությունը:

Հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի նիստի ժամանակ Հայաստանը ստորագրել է մի համաձայնագիր, որը նկարագրում է, թե ինչպես ենք մենք կարգավորելու մեր հարաբերությունները ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսաստանի Դաշնության հետ: Ըստ վարչապետի՝ այդ փաստաթղթում այն դրույթները, որոնք վերաբերում են մաքսային հարաբերություններին կամ այն հարաբերություններին, որոնցում այդ երեք երկրները հրաժարվել են իրենց իրավասություններից՝ դրանք արդեն հանձնելով նոր կառույցին, հղումներ են անում, որ այդ հարցերի շուրջ մենք պետք է ուղղակի հարաբերություններ ունենանք արդեն ձեւավորված նոր մարմնի հետ: Այնպես, ինչպես որ այսօր Հայաստանն աշխատում է Եվրոմիության հետ՝ շատ հարցեր երկկողմ հարաբերություններով չկարգավորելով. «Մեր հարաբերությունները պետք է լավ լինեն Եվրոմիության այս կամ այն երկրի հետ, բայց առեւտրին վերաբերող կամ մաքսային հարցերում նրանք հանդես են գալիս որպես միասնական կառույց: Նույնը տեղի է ունենալու եվրասիական շրջանակում, եւ գնալով Եվրասիական միության շրջանակում ստեղծված այդ նոր մարմնի լիազորություններն ավելանալու են: Նրանք նախապատրաստել են 52 նոր համաձայնագրեր, որոնք ներկայացվել են այդ երեք երկրների Ազգային ժողովների հաստատմանը, եւ որոնցով լրացուցիչ նոր լիազորություններ են հանձնելու Եվրասիական միությանը: Հայաստանն ունի կենսական շահեր այդ բնագավառում: Եվ դա նշանակում է, որ մենք պարտավոր ենք մեր հարաբերությունները խորացնել, ընդլայնել ու անմիջական կապի մեջ լինել Եվրասիական միության հետ, դա բխում է ՀՀ շահերից: Եվ մենք այդ ուղղությամբ գնալու ենք»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Նախարար Օհանյանը` զինվորի մահվան առնչությամբ. «Արել ենք այն, ինչ կարողացել ենք»

«**Ազգ**»-ի երեկվա համարում գրել էինք, որ Նուբարաշենի զորամասի նախկին զինծառայող Արթուր Քոչարյանի ընտանիքը որդու մահվան մեջ մեղադրում է պաշտպանության նախարարությանը: Ընտանիքի անդամները հավաստիացնում են, որ Արթուրին փրկել չի հաջողվել ՊՆ-ի խոստացած ֆինանսական օժանդակության ուշացման պատճառով: Որ հնարավոր էր Արթուրի կյանքը փրկել, Քոչարյանների ընտանիքին հավաստիացրել են Մոսկվայի բժիշկները` հավելելով, որ հիվանդությունը սրվել է ու հասել գագաթնակետին:

Երեկ պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանը** Մասիսի նոր շրջանի զինավանի բացման արարողությանն անդրադարձել է իր ղեկավարած գերատեսչությանը հասցեագրված մեղադրանքներին` ընդգծելով, որ Արթուրի հիվանդության նշանները ի հայտ են եկել ծառայության ընթացքում, սակայն, ամենայն հավանականությամբ, զինվորի առողջական խնդիրն ավելի վաղ է ծագել: Նախարարությունը հիվանդության հայտնաբերման առաջին իսկ օրվանից արել է հնարավոր ամեն ինչ Արթուրի կյանքը փրկելու համար: «Այժմ լուրեր են պտտվում, թե պաշտպանության նախարարությունը զինվորի բուժման համար միջոցներ չի ձեռնարկել: Դա այդպես չէ: Թեպետ նախարարությունը չունի միջոցներ զինծառայողների բուժումն արտերկրում կազմակերպելու համար, այնուամենայնիվ նախնական գումար հատկացվել է Մոսկվայում զինվորի բուժումը հանձն առած կազմակերպությանը, կնքվել է պայմանագիր, որով պարտավորվել էինք վճարել մնացած գումարը: Ոչ մի խնդիր չի եղել, սակայն հիվանդությունն այնպիսին է, որ կատարվեց այն, ինչ կատարվեց: Մենք վշտացած ենք կատարվածի համար, սակայն արել ենք այն, ինչ կարողացել ենք», ասաց նախարար Օհանյանը:

Քոչարյանների ընտանիքը չի հերքում, որ նախարարությունն աջակցել է իրենց, սակայն, վերջին պահին, շուրջ մեկ ամիս, նախարարության այս սենյակից այն սենյակը վազելուց, լրատվամիջոցների բարձրացրած աղմուկից եւ քննադատությունից հետո: Նախարարությունն աջակցել է, սակայն` ուշացած:

Արթուր Քոչարյանը տառապում էր արյան սուր հիվանդությամբ, եւ բուժման համար անհրաժեշտ էր 67.000 ԱՄՆ դոլար: ՊՆ-ն նախ խոստացել է օգնել, հետո հայտարարել է, որ իրենց վրա հույս չդնեն, հետո հավելել են, որ կտրամադրեն 3 միլիոն դրամ, իսկ ավելի ուշ հավաստիացրել են, որ կօժանդակեն եւ կհոգան վիրահատության ամբողջ ծախսը, հավաստիացնում են զինվորի հարազատները:

Նշենք նաեւ, որ Նուբարաշենի զորամասում ծառայությունն անցած Արթուրի հիվանդությունն ի հայտ է եկել սեպտեմբերի վերջին: Բարեխիղճ ծառայության համար Օհանյանը Քոչարյանին պարգեւատրել էր:

Նախարարը նաեւ շեշտել է, որ երբ ծառայողական պարտականությունների կատարման կամ սահմանների պաշտպանության ժամանակ զինծառայողը զոհվում կամ վիրավորվում է, օրենքով սահմանված կարգով պետությունը նրան գումար է տալիս, սակայն այդ օրենքը չի տարածվում խաղաղացիական անձանց վրա: Այսինքն` սահմանամերձ գյուղերի բնակիչները հակառակորդի կրակոցից վիրավորվելու դեպքում որեւէ կերպ ապահովագրված չեն կամ արտոնություններ չունեն: Այս ֆոնին նախարարը խոստացավ, որ իր վերահսկողության տակ կպահի Ադրբեջանի ԶՈՒ-ից հրադադարի ռեժիմի խախտումների հետեւանքով վիրավորված գյուղացիների բուժման հարցերը եւս:

«Ցավոք, մենք դեռ ունենք սահմանամերձ բնակավայրեր, որոնք հրաձգության են ենթարկվում հակառակորդից, բայց պետք է ասեմ` եթե խաղաղացիական անձինք դիմում են պաշտպանության նախարարությանը, մենք աջակցում ենք: Այնպիսի դեպք չի եղել, որ մենք չաջակցենք, այդ թվում` օգտագործելով կայազորային հոսպիտալները: Այսուհետեւ ավելի ուշադիր կլինենք եւ կփորձենք օգնել նաեւ նրանց, ովքեր անմիջական խնդրանք-դիմում չեն հասցեագրել պաշտպանության նախարարությանը»:

Տարեսկզբից հակառակորդի կրակոցից վիրավորվել է 26 հոգի, որոնցից երեքը` խաղաղացիական անձինք:

Նախարարը երեկ անդրադարձել է նաեւ զորակոչի ուղղությամբ տարվող աշխատանքներին: Նախարարի մեկնաբանությամբ` զորակոչի ընթացքը մշտապես բարելավման մեջ է, եւ այս տարվա գարնանային եւ աշնանային զորակոչերն ապացուցեցին, որ այդ առումով տարին առանձնահատուկ է: «Կարողացանք գտնել այն թերությունները, որոնք դեռեւս կան, եւ համապատասխան օպերատիվ հետախուզական աշխատանքների միջոցով կարողացանք ազդել այն կառույցների եւ անձանց վրա, ովքեր իրականացնում են կցագրման, բժշկական հետազոտման աշխատանքներ եւ բաշխումն ըստ զորամասերի: Ես ունեմ հավաստիմ զինծառայողներ, ովքեր ընդգրկված են օպերատիվ հետախուզական աշխատանքների մեջ, եւ նրանց համար սկզբունք է, որ զորակոչի գործում գրեթե խախտումներ չլինեն: Նրանք ինձ ասում են, որ անում են հնարավորը, որպեսզի նույնիսկ մեկ անձ չկարողանա փորձել կաշառակերության միջոցով այս կամ այն խնդիրը լուծել»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Մայրաքաղաքը պատրաստվում է ձմռանը




*Դեռեւս անձրեւ է գալիս*

Ամփոփելով տարվա ընթացքում կատարված աշխատանքները` Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Կառլեն Ղազարյանը շեշտում է, որ մայրաքաղաքում կատարվել են բազմաբնակարան շենքերի հարթ եւ թեք տանիքների վերանորոգում, նորոգվել է 15.000 գծամետր ջրթափ խողովակ: Մայրաքաղաքի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգումը Ղազարյանն անվանում է աննախադեպ: Նորոգվել է 1315 շքամուտք: Փողոցային լուսավորության անցկացման արդյունքներն էլ վարչության պետն անվանում է գոհացուցիչ: Անձրեւաջրերի կուտակումները բացառելու նպատակով կառուցվել է 2818 մետր ընդհանուր երկարությամբ անձրեւատար: Աղբահանության իրականացումն, ըստ Ղազարյանի, բավարար է: Քաղաքի երկրորդական փողոցներում աղբահանությունն անցկացվում է 2-3 օրը մեկ անգամ, իսկ կենտրոնական փողոցներում` ամեն օր:

Ներկա դրությամբ վարչության օրակարգային հարցը ձմռան նախապատրաստությունն է: Ձեւավորվել են օպերատիվ շտաբներ, կազմվել է համապատասխան քարտեզ: «Ձմռանը լուրջ խնդիրներ չեն առաջանա», հավաստիացնում է Ղազարյանը` շեշտելով, որ արդեն հավաքագրվել է 1000 տոննա աղ, 1600 խմ ավազ, 260 միավոր տեխնիկա, որոնցից ձյան տեղումների ժամանակ կարողանան ապահովել փողոցների մաքրությունը: Բացի հիմնական աշխատողներից պայմանագրային հիմունքներով աշխատողների խմբեր են ձեւավորվել, որոնք պետք է սանտիարական աշխատանքներ կատարեն:

Հ. Հ.

*ԱՊՈԿԱԼԻՊՍԻ՞Ս...*

# Աշխարհի վերջի այդ մեկ հասիկ օրը

*1-ին էջից*

Մեկ այլ նմանաբնույթ ֆիլմ` վերջին հարյուրամյակի բնության խոշորագույն աղետների ֆոնին, մարդկության վերջի սպառնալիքը կապում էր արեւի վրա կատարվող կատաստրոֆիկ երեւույթների հետ, որոնց ազդեցությամբ մոլորակը կործանման է ենթարկվելու: X կամ Նիբիրու մոլորակի լուրերն այնքան շրջանառվեցին, որ խեղճը երեւի մոլորվեց, անհետացավ: Մի երիտասարդ հեռուստատեսային այսպիսի հաղորդման ազդեցությամբ հուսահատ ու տագնապած եւ շատ լուրջ ասում էր` էլ ինչ իմաստ ունի որեւէ բան ձեռնարկել կամ անել, միեւնույն է, աշխարհի վերջը շուտով գալու է: «Հավատո՞ւմ ես», հարցրի: Հաստատեց` վկայելով դիտած հեռուստաֆիլմի կադրերն ու գիտնականների խոսքերը: Խեղճը առաջին անգամ էր լսում այս մասին: Կեսկատակ երբ Discovery-ի վերը ակնարկած ֆիլմի մասին գրեցի մանչեստրահայ բարեկամիս, հումորային մի երկտող ստացա, թե` մի՞թե դու էլ ես ամերիկյան այդ հիմարությունների ազդեցության տակ- փող են աշխատում:

(Աստվածաշնչյան թեմայով մուլտֆիլմերից մեկում նախաջրհեղեղային տեսարանում, երբ կյանքային խրախճանքներում բթացած եւ թոհուբոհներում խոնջացած մարդկանց զգուշացվում է վերահաս վտանգի մասին, անհավաս



ամբոխի հեգնական քմծիծաղն ու հիստերիկ ծիծաղը խլացնում է ասվածը. քիչ անց ամենը` ծիծաղն ու քմծիծաղը, քեֆն ու ուրախությունը ջրամույն էին արդեն:

Մարդկային կյանքը շարունակվեց իհարկե, եւ Նոյի աղավնին վերադարձավ ձիթենու կանաչ շիվը կտուցին):

Վերոնշյալ ֆիլմերն ու հաղորդումները` մանավանդ գիտական փաստարկների վրա կառուցված եւ գիտության լեզվով երեւույթները ներկայացնող, ամենաանհավատների վրա անգամ ներգործում են: Հաշվարկված է` մարդկային հոգեբանության վրա բոլորից շատ ազդեցություն ունենում են սուր-զգայական, էքզիստենցիալիստական, էքստրեմալ վիճակներ արտահայտող սյուժեներ, պատմություններ: Այսպիսի բովանդակությամբ գրքերը սովորաբար դառնում են բեսթսելլերներ, դրանց տպագրությունը տասնյակ, անգամ հարյուրավոր միլիոնների է հասնում: Նմանապես ամենադիտարկվող եւ եկամտաբեր ֆիլմերը հիմնականում ֆիլմ-կատաստրոֆա ժանրին են պատկանում («Արմագեդոն», «2012», «Օր` վաղվան հաջորդող»- A Day after Tommorow» եւ այլն):

Այսբնույթ սցենարներին երբ նախորդում են կամ զուգահեռ ընթանում են գիտական փաստերով, նույնիսկ բացահայտ պսեւդոգիտական հաղորդումները, կրքերն ու հետաքրքրություններն ավելի բորբոքվում են, սրվում են նաեւ վախը, սպասումը, թե` տեսնես 2012-ի դեկտեմբերի 21-ի առավոտը ինչպե՞ս կբացվի, կամ կբացվի՞, թե՞ չէ: Այս մասին լուրջ մասնագետի, լուրջ գործունեություն ծավալող ֆիզիկոսի, աստղաֆիզիկոսի վարանում ես հարցնել, անհեթեթ վիճակի մեջ չհայտնվելու համար, որովհետեւ նույն Nibiru-ի «թունդ օրերին» մասնագետի հերքումից հետո, միեւնույն է` թեմայի հետաքրքրությունը շարունակվում էր գրավոր կամ բանավոր` սերիալային խոսակցության պես:

Երբեմն մտածում ես` գուցե մարդ արարածը հոգնել է ինքն իրենից (իր հակասական բնույթից` արարող-ստեղծող, ավերող-կործանող լինելուց), իր տեսակից, ինչպես Discovery-ի վերոնշյալ հաղորդման տեքստում ծեծված ճշմարտությունը հնչեց եւս մեկ անգամ, այսինքն` այն ինչ ունի սկիզբ, ունի նաեւ վախճան, եւ մենք էլ ինչպես, օրինակ, դինոզավրերը, անհետանալու ենք մի օր: Այս մեկ օրվա համար, անհիշելի ժամանակներից տարբեր տարեթվեր եկել ու անցել են - Աշխարհի վերջի այդ մեկ հասիկ օրը:

XXI դարի գիտական մտքի ընթացքը անկանխատեսելի է, բացահայտումները անսպասելի-անհավանական, սակայն բնության արհավիրքները` երկրային թե երկնային ծագման` կասեցնելու ռեսուրսները, ոչինչ են: Թեմայի, սյուժեի առումով սրանք, իհարկե, անսպառ ու գտնված նյութեր են, որովհետեւ միշտ են եղել գրավիչ եւ շարունակում են մնալ այդպիսին: 2012-ի դեկտեմբերը, ահավասիկ, ընթացքի մեջ է. հետաքրքրական է` ի՞նչ են զգում ու մտածում հարյուրավոր այսբնույթ հեռուստահաղորդումների, հոդվածների ու ֆիլմերի հեղինակները, ովքեր տագնապով համակեցին միլիոնավոր մարդկանց սրտերը: Իրենք, փո՞ղ էին աշխատում կամ ռեյտինգ սարքում: Իսկ ինչո՞ւ էին լռում աշխարհի հեղինակավոր գիտական կենտրոնները:

Այս ֆոնի վրա հետաքրքրական էր դեկտեմբերի նախօրեին «Արմենպրեսի» տարածած հաղորդագրությունը` ՆԱՍԱ-ի կայքի հղումով: Մեջբերենք.

«2012 թվականին աշխարհի վերջը չի լինի: Մեր մոլորակը միանգամայն կարգին վիճակում Է եղել ավելի քան 4 միլիարդ տարի, եւ այն պնդումները, թե շուտով վրա կհասնի աշխարհի վերջը, ոչ մի գիտական հիմք չունեն»:

«2012 թվականի դեկտեմբերի 21-ը չի դառնա մարդկության վերջին օրը, սակայն այդ օրը կսկսվի հերթական ձմեռային արեւադարձը»: Դեռ ավելին, ամերիկացի գիտնականները համոզված են, որ հին մայաներն ընդհանրապես աշխարհի վերջ չեն կանխագուշակել. «Ժամանակը չի վերջանում միայն այն պատճառով, որ ձեր խոհանոցում կախված օրացույցը դեկտեմբերի 31-ին ավարտվում Է: Այդպես Էլ մայաների օրացույցը 2012 թվականի դեկտեմբերի 21-ով չի ավարտվում... »:

Միեւնույն է` շատերը շարունակում են սպասել... մինչեւ այդ մեկ հասիկ օրն էլ կգա ու... կանցնի:

# «Զարթօնք»-ի 75, ԹՄՄ-ի 65 եւ Վահան Թէքէեան վրժ.-ի 60-ամեակներու տօնակատարութիւնը













Թէքէեան մշակութային միութեան հիմնադիրներու սերունդը 65 տարիներ առաջ, հաւատարիմ իր գաղափարական հաւատամքին, անյողդողդ մնալով իր ազգային լայնածաւալ հեռանկարներուն, ոչ միայն ծրագրեց Միութեան գործունէութեան ուղեգիծը, այլեւ խիզախ որոշումը գործադրեց զայն դարձնելու գաղութները իրարու զօդող համախմբում մը: ԹՄՄ-ի հիմը դնող տեսլապաշտ երէց ընկերներ ունէին յանդուգն տեսիլքը՝ սփիւռքահայ իրականութենէն ներս դառնալու հայ մշակոյթի հարուստ ժառանգով խանդավառ ազգապահպան առանցք:

Կտակ մըն էր այս, որ պարտ էր փոխանցել սերունդէ սերունդ, եւ ահա մենք՝ որպէս ժառանգորդը այդ կտակին, գիտակից պարտականութիւնը ունինք գործադրելու զայն առողջ հայրենասիրական ոգիով, դառնալու արթուն պահակները մեր մեծ Միութեան: 2012 թուականը կը զուգադիպի Թէքէեան մշակութային միութեան հովանաւորութիւնը վայելող եռեակ յոբելեաններու՝ «Զարթօնք» պաշտօնաթերթի հիմնադրութեան 75 ամեակին, ԹՄՄ-ի 65 ամեակին եւ Վահան Թէքէեան վրժ.-ի 60 ամեակներուն: Այս յոբելենական տօնակատարութիւններուն հանդիսութիւնը պաշտօնապաշտ շուքով տեղի ունեցաւ ուրբաթ, 23 նոյեմբեր 2012-ի երեկոյեան, Պէյրութի Թէքէեան կեդրոնի «Հրաչեայ Սեդրակեան» հանդիսասրահին մէջ: Հոծ բազմութեան մը ներկայութեան կայացաւ եռեակ յոբելեաններուն տօնակատարութիւնը, զոր իրենց ներկայութեամբ պատուած էին Լիբանանի կառավարութեան արդիւնաբերութեան նախարար պրն Վրէժ Սաբունճեան, Մեծի տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի ներկայացուցիչ Կորիւն արք. Պաղտեան, Լիբանանեան խորհրդարանի անդամներ Ժան Օղասապեան, Սերոբ Գալփաքեան, Շանթ Չինչինեան եւ Սերժ Թուրսարգիսեան: Ներկայ էին նաեւ Կեդրոնական դրամատան փոխկառավարիչ դոկտ. Յարութիւն Սամուէլեան, հայ յարանուանութեանց ներկայացուցիչներ, ՌԱԿ Կեդրոնական վարչութեան անդամներ, ՌԱԿ Հանրապետական վարչութեան փոխատենապետ՝ Կարէն Կակոյեան, ՌԱԿ Լիբանանի Շրջանային վարչութեան ատենապետ Յարութ Երկանեան եւ անդամներ, հայ քաղաքական կուսակցութեանց ներկայացուցիչներ, նախկին ատենապետ Թէքէեան մշակութային միութեան Հիմնադիրներու մարմնի՝ Կարապետ Պապահէքեան, ԹՄՄ Հիմնադիրներու մարմնի ատենապետ եւ անդամներ, պատուոյ հիւպատոս Սալվատորի՝ Մեթր Սարգիս Սերայտարեան, Հայաստանի դեսպանատան ներկայացուցիչներ, տնօրէն եւ խմբագրական կազմ «Զարթօնք» օրաթերթի, Վահան Թէքէեան վրժ.-ի հոգաբարձութեան կազմի ատենապետ եւ անդամներ, Վահան Թէքէեան վրժ.-ի տնօրէն եւ ուսուցչական կազմ, ԹՄՄ Տեղական վարչութեան ատենապետ եւ անդամներ, ինչպէս նաեւ լիբանանահայ մամուլի ներկայացուցիչներ:

Հանդիսութիւնը իր մեկնարկը ստացաւ, երբ Վահան Թէքէեան վրժ.-ի երգչախումբը, խմբավարութեամբ հայ երաժշտագէտ ազնիւ մշակ տիկ. Նորա Եղիայեանի, երգեց Լիբանանի եւ Հայաստանի օրհներգերը: Յուսկ ապա բացման խօսքով բեմ բարձրացաւ «Զարթօնք» օրաթերթի խմբագիր տիկ. Պայծիկ Գալայճեան, որ ողջունելէ ետք բոլորին յարգելի ներկայութիւնը, անդրադարձաւ ԹՄՄիութեան կատարած ազգային դերին ու «Զարթօնք»ի վաստակին, հաստատելով՝ «Մեր թերթին անցած 75 տարիներու վաստակն ու ազգային-քաղաքական ուղեգիծը ընդմիշտ եղած է ողջմիտ ու համապատասխան մեր ազգային շահերուն: «Զարթօնք» անփոփոխ հաւատարմութեամբ հետեւած է այդ ուղիին, կը հետեւի այսօր եւ պիտի հետեւի նաեւ վաղը: Մեր ուխտն է նոր թափ տալ ազգապահպանումի մեծ աշխատանքին եւ մի՛շտ զօրավիգ կանգնիլ հայ մշակոյթի ծաղկումին»: ԹՄՄիութիւնը ազգային անհրաժեշտութեան պահանջն էր, երբ մանաւանդ խումբ մը հաւատաւոր ու համախոհ ընկերներ հեռաւոր Ամերիկայէն ու Լիբանանէն, հայ մշակոյթի ու հայապահպանութեան պաշտամունքը իրենց հոգիին մէջ, հիմը դրին Վահան Թէքէեան վարժարանին հայահոծ Պուրճ Համուտի շրջանին մէջ, որ կարճ ժամանակի ընթացքին ոչ միայն դարձաւ պատուաբեր կրթական օջախ, այլեւ փորձադաշտը մեր ազգային նոր ծլարձակումներուն: Վահան Թէքէեան վարժարանի պատմականին մասին իր խօսքը յայտնելու համար բեմ հրաւիրուեցաւ հոգաբարձութեան ատենապետ Ռաֆֆի Յովսէփեան:

Ան իր ակնարկները սեւեռեց վարժարանի հիմնադրութեան օրերուն եւ ապա հանգրուան առ հանգրուան ներկայացուց պատմական իրողութիւններ, որոնք քարքարի վրայ դնելով վարժարանը հասցուցին ներկայի իրավիճակին, ազգային դաստիարակութեամբ տոգորուն աշակերտութեամբ շնչող կրթական հաստատութեան:

Յայտագրին գեղարուեստական բաժնով ելոյթ ունեցաւ Լուսինէ Տագեսեան, որ դաշնամուրի վրայ շնորհալի կերպով նուագեց Առնօ Բաբաջանեանի «Էլեկիա»ն եւ Շոփէնի «Նոքթիւրն op. 72» կտորը, առինքնելով ներկաները:

Պաշտօնական հանդիսութեան յայտագրով բեմ հրաւիրուեցաւ «Զարթօնք» օրաթերթի տնօրէն, ՌԱԿ Կեդրոնական վարչութեան եւ ԹՄՄ Հիմնադիրներու մարմնի ատենադպիր Արսաւազ Մելքիսէթեան՝ փոխանցելու համար իր խօսքը «Զարթօնք»ի 75 ամեակին: Ա. Մելքիսէթեան նախ արժեւորեց Ռամկավար Ազատական Կուսակցութեան ունեցած ազգային գործունէութիւնը Լիբանանի տարածքին եւ ապա իր ակնարկը սեւեռեց «Զարթօնք»ի ծննդոցին: «Պահանջատիրութեան գաղափարը սերմանելու յետեղեռնի սերունդներու մտքին մէջ եւ համոզում գոյացնել անոնց մօտ, որ իրենց դժուար առօրեային մէջ իսկ ժամանակ գտնեն հետապնդելու ազգին անժամանցելի իրաւունքները»: Ներկայացնելէ ետք «Զարթօնքի» ծնունդը եւ օրաթերթի կտրած ուղին, Ա. Մելքիսէթեան նաեւ անդրադարձաւ անոր ներկային եւ հուսկ՝ շեշտը դրաւ անկէ ակնկալուած ապագայի գործելաձեւին ու մտածելակերպին վրայ, շեշտելով, թէ «Զարթօնք» պէտք է քայլ պահէ նոր օրերու թէ մարդկային եւ թէ ազգային պահանջներուն հետ մնալով մեր ժողովուրդին եւ հայրենիքին իրագործումները հայ հասարակութեան ծանօթացնող թերթ մը, որ կոչուած է մտնելու իւրաքանչիւր հայու տունէն ներս՝ ինչ յարանուանութեան ալ որ պատկանի կամ քաղաքական ինչպիսի համոզումներու տէր ալ ըլլայ ան:

Յաւուր պատշաճի իր խօսքը փոխանցեց ԹՄՄ Հիմնադիրներու մարմնի ատենապետ, ՌԱԿ Կեդրոնական վարչութեան անդամ, հոբելենական գործադիր մարմնի ատենապետ դոկտ. Հրայր Յովիւեան, որ արժեւորելով ԹՄՄ-ի հիմնադրութեան գաղափարը յայտնեց. «Հարկաւոր էր տէր կանգնիլ եւ հոգեմտաւոր ու մշակութապահպանողութիւն ստեղծել սփիւռքահայութեան համար»: Յովիւեան իր հայեացքները սեւեռելով Պէյրութի մէջ կեանքի կոչուած Միութեան եւ անոր հեռատես ղեկավարութեան գործունէութեան՝ յայտնեց. «Անոնք չբաւականացան միայն լիբանանահայութեան մշակութային կարօտը յագեցնելով, այլեւ անմիջապէս ծաւալեցին իրենց գործունէութիւնը՝ ստեղծելով մասնաճիւղեր միջին-արեւելեան այլ գաղութներու, հեռաւոր Ամերիկայի եւ մինչեւ անգամ ամենահեռաւոր Աւստրալիոյ գաղութներէն ներս»: Յովիւեան ընդգծեց նաեւ ԹՄՄ-ի ծաւալած գործունէութիւնը մայր հայրենիքէն ներս: «Հայաստանի անկախութենէն ի վեր, հայրենի հողին վրայ եւս Թէքէեան մշակութային միութիւնը այսօր կը գործէ իր հոյակերտ կառոյցով եւ ողջմիտ ղեկավարութեամբ»:

Գեղարուեստական յայտագրով իր գնահատելի բաժինը բերաւ տիկ. Անի Թօրանեան-Գրիգորեան, Վահան Թէքէեանի հատընտիր հատուածներու ընթերցումով: «Պիտի ըսենք Աստուծոյ», «Հպարտութիւն» եւ «Յոյսեր» ու «Անունդ» քերթուածները կեանքի կոչուեցան սրահէն ներս եւ մենք՝ անգամ մը եւս գիտակցեցանք, թէ որքան բազմախորհուրդ իրողութիւն մըն էր մեր միութիւնը անուանակոչել Թէքէեան մշակութային միութիւն:

Արդարեւ, Յոբելենական հանձնախումբը հանդիսաւորապէս նշեց եռեակ յոբելեանները՝ հիմնադրութեան ամեակները: Յոբելեաններուն առիթով պաստառօրէն արժեւորուեցան անցած ուղիները «Զարթօնք»-ին, իրագործումները լոյս աշխարհ բերուեցան Թէքէեան մշակութային միութեան եւ սերունդներու դաստիարակութեան ու արգասիքին հանրագումարին մասին խորհրդածութիւններ կատարուեցան Վահան Թէքէեան միջնակարգ վարժարանին: Յուսկ, Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ներկայացուցիչ Կորիւն արք. Պաղտեան հրաւիրուեցաւ բեմ ընթերցելու կոնդակները Գարեգին Բ. Ամենայն հայոց կաթողիկոսին եւ Արամ Ա. Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, որոնցմէ ետք ան յայտնեց իր շնորհաւորական ջերմ խօսքերը յոբելեարներուն: Ան ուժ եւ կարողութիւն մաղթեց բոլոր նուիրեալներուն դիմագրաւելու համար նորանոր մարտահրաւէրները:

Յոբելենական այս յաջող հանդիսութեան աւարտին հպարտութեամբ կրցանք հաստատել, թէ «Զարթօնքը», ԹՄՄ-ը եւ Վահան Թէքէեան վարժարանը պատուախնդրութեամբ իրագործած են իրենց բոլոր ծրագիրները հիմնադրութենէն մինչեւ այսօր եւ հաւատարմօրէն պիտի շարունակեն իրենց ծառայութիւնը հայապահպանման ու մշակոյթին:

***

Յաջորդ օրը, երեկոյեան, արդէն խնջոյքի սեղաններու շուրջ նշուեցաւ եռեակ յոբելեանը, ԹՄՄիութեան եւ ՌԱԿ ներկայացուցիչներու մասնակցութեամբ, Պէյրութի «Լէ Ռոյեալ» հիւրանոցի շքեղ սրահներուն մէջ: Յոբելեանական ճաշկերոյթի ընթացքին ՌԱԿ Հայաստանի Հանրապետական վարչութեան փոխատենապետ Կարէն Կակոյեան ոսկեայ յուշամեդալով պատուեց ԹՄՄ-ի, «Զարթօնքի» եւ Վ. Թէքէեան վրժ.-ի ղեկավարները: Ճաշկերոյթի ընթացքին տեղի ունեցաւ հանգանակութիւն ի նպաստ վարժարանին եւ օրաթերթին: Հանգանակուեցաւ շուրջ 30 հազար դոլար:

«ԶԱՐԹՕՆՔ»

ԲԱՔՈՒ

# Ընկե՞լ է, թե՞ «օգնել են», որ ընկնի

Դեկտեմբերի 3-ին Բաքվի Մեհմանդարով փողոցի թիվ 29 նորակառույց շենքի վերելակահորում հայտնաբերվել է տղամարդու դիակ: Ոստիկանության հաղորդագրության մեջ նախապես ասվել է, որ «Մահեռամ Յուսեյն օղլի Իզզաթովը ոստիկանության գնդապետ-լեյտենանտ էր (փոխգնդապետ)»: Երեկ, սակայն, հայտնի է դարձել, որ «դժբախտ պատահարի» զոհը ոչ թե ոստիկանության, այլ ԱԱ նախարարության աշխատակից էր:

Այդ գերատեսչության մամուլի քարտուղար Արիֆ Բաբաեւը հաստատել է տեղեկությունը, բայց ավելացրել, որ «խոսակցությունները, թե իբր Իզզաթովը գտնվել է անսթափ վիճակում, իրականությանը չեն համապատասխանում»: Նա չի մանրամասնել, թե ովքե՞ր են նման խոսակցություններ տարածել: Եվ, առհասարակ, ԱԱ նախարարության աշխատակցին ոչ հարիր այդ հայտարարությունը կասկածներ է ծնում միայն:

Դրանք ավելի են սրվում, երբ ծանոթանում ենք դեպքի մասին Բաքու քաղաքի Խաթայիի շրջանի դատախազության քննիչ Ջհանգիր Շուքուրովի մեկնաբանությանը: Ըստ այդմ, «քննության ընթացքում պարզվել է, որ Իզզաթովն այդ նորակառույց շենքում բնակարան էր գնել եւ այնտեղ վերանորոգման աշխատանքներ էր իրականացնում»: Այսքանը «քննությամբ պարզելու» կարիք, երեւի թե, չկար էլ: Իսկ ահա շարունակությունը «քննչական գոհար» է: Շուքուրովն ասել է. «Ճիշտ է, երեկոյան նա չպետք է շենք մտներ, քանի որ այն վերջնականապես շահագործման հանձնված չէր, բայց բնակարանների մի մասը վաճառված է արդեն»:

Ո՞վ կամ ի՞նչը կարող էր արգելք լինել, որ մարդը «երեկոյան չմտնի շենք», որտեղ բնակարան էր գնել եւ իրականացնում էր վերանորոգման աշխատանքներ: «Այդ գիշեր (ուշադրություն է հայցում այն, որ քննիչը մի անգամ ասում է «երեկո», երկրորդ դեպքում՝ «գիշեր», բայց ժամ չի նշում- Վ. Ա.) Իզզաթովը բնակարան է տարել պաստառներ եւ պետք է հանդիպեր վարպետին, որպեսզի նրան որոշ հանձնարարություններ տար»: Յնարավո՞ր է, որ մինչեւ վերջ շահագործման չհանձնված շենքում վարպետը աշխատեր մինչեւ գիշեր: Յազիվ թե:

«Բնակարանը գտնվում է տասներեքերորդ հարկում: Իզզաթովը բարձրացել է տասներեքերորդ հարկ: Շքամուտքում շատ մութ է եղել, դրա համար էլ նա սխալմամբ ոտք է դրել դռնախորշին, որը վերելակահորինն էր: Վերելակի դռները գտնվում են Իզզաթովի բնակարանի կողքին, Իզզաթովն այդպես էլ ընկել է՝ պաստառները ձեռքին»:

Այս «քննությունը», մեղմ ասած, համոզիչ չէ: Այլապես պիտի ընդունել, որ «արագորեն եվրոպականացող» Բաքվի նորակառույց շենքում վերելակները իջնում-բարձրանում են, բայց… կա նաեւ «թափուր վերելակահոր, որը դռներ չունի», եւ ԱԱ նախարարության փոխգնդապետ Իզզաթովը, բարձրանալով տասներեքերորդ հարկ, պաստառները ձեռքին դուրս է եկել վերելակից, շատ մութ լինելու պատճառով «սխալմամբ ոտք դրել դռնախորշին, որը… վերելակահորինն էր»:

Տարբերակ էլ կա՝ շենքում վերելակ դեռեւս տեղադրված չէր, Իզզաթովը ոտքով է տասներեքերորդ հարկ բարձրացել եւ իր բնակարանի դուռը շփոթելով՝ ոտք դրել վերելակահորի դռնախորշին: Բայց սա էլ կլինի չափազանցություն, եթե նա «չի գտնվել անսթափ վիճակում»: Ամեն դեպքում, ԱԱ նախարարության աշխատակցի մահվան պատմությունը չափազանց խճճված է: Չի կարելի բացառել, որ Իզզաթովին պարզապես «օգնել են», որպեսզի «պաստառները ձեռքին» ընկնի վերելակահորը:

Կասկածելի է հատկապես, որ քննիչը դեպքից ընդամենը երկու օր անց խոսում է ոչ թե վարկած առաջադրած լինելու, այլ «քննությամբ պարզված հանգամանքների» մասին: Իսկ քրեական գործ հարուցվել է «անփութություն» հոդվածով: Այն է՝ կոմունալ ծառայությունները մեղադրվում են, թե ինչո՞ւ «վերելակահորը դռներ չի ունեցել եւ չեն լուսավորել սանդղահարթակը»: Ո՞ւմ ցուցմունքների հիման վրա է «քննությունը պարզել դեպքի հանգամանքները», գործով վկաներ կա՞ն, թե՞ ամեն ինչ կառուցված է քննիչ Շուքուրովի «մասնագիտական հմտությամբ» կառուցված՝ դեպքերի հաջորդականության վրա՝ ոչինչ հայտնի չէ:

7 տարի է՝ Նախկին Միջազգային համալսարանի ռեկտոր, Ֆրանսիայում որպես քաղաքական վտարանդի բնակվող Էլշադ Աբդուլլաեւին չի հաջողվում պարզել, թե ի՞նչ հանգամանքներում է «անհայտ կորել» իր եղբայրը, որը նույնպես ԱԱ նախարարության աշխատակից էր՝ մայորի կոչումով: Ոչ ոք չի պարզի նաեւ, թե ի՞նչ հանգամանքներում է վերելակահորի հատակին հայտնվել ԱԱ փոխգնդապետ Մահեռամ Իզզաթովի դիակը: Գլխավոր «ապացույցը» կա՝ նա այնտեղ է ընկել «բնակարանի վերանորոգման պաստառների» հետ…

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Հակասիրիական կոալիցիայի մասնակիցները հայտնի են

## *«Փեթրիոթները» կտեղաբաշխվեն առաջիկա շաբաթներին*

*1-ին էջից*

Ռազմական գործողությունը կարող է սկսվել ամեն պահի, դրան կմասնակցեն ընտիր ստորաբաժանումների 75 հազար մարտիկներ:

Նշվում է նաեւ, որ կոալիցիան չի կարողանա միջազգային ընկերակցության թույլտվությունը ստանալ ՄԱԿ-ի ԱԽ-ում Ռուսաստանի եւ Չինաստանի վետոների պատճառով: Յակասիրիական ռազմարշավի անցկացման համար իրավաբանական հիմք կդառնա քիմիական զենքի կիրառման բուն փաստը, ինչը միջազգային իրավունքի մեջ համարվում է մարդկության դեմ ուղղված հանցագործություն:

2012 թ. մայիսին ԱՄՆ-ի եւ դաշնակից բանակների հատուկ ստորաբաժանումների մոտ 12 հազար մարտիկներ Յորդանանում անցկացրին լայնածավալ զորավարժություններ «Եռանդուն առյուծ» պայմանական անունով: Պենտագոնի պաշտոնական հայտարարությունների համաձայն, զորավարժությունների նպատակները եղել են փախստականներին օգնության հասկացման մշակումը եւ ահաբեկիչներին դիմակայելու գործողությունները: Սակայն շուտով հաղորդումներ հայտնվեցին, որ իրականում հատուկ ջոկատների նպատակը եղել է քիմիական զենքի սիրիական պահեստների գրավումը: Յոկտեմբերին «Նյու Յորք թայմսը» հաղորդեց, որ վերջերս հաճախակի են դարձել ամերիկացի բարձրաստիճան զինվորականների այցելությունները Յորդանան:

Թերթի տվյալներով, մոտ երկու ամիս առաջ գաղտնաբար Յորդանան է մեկնել ամերիկյան բանակի 150 հոգանոց մի ջոկատ: Դրա խնդիրն է այդ երկրի կառավարությանն օգնել սիրիացի փախստականների ընդունման հարցում եւ պատրաստ լինել այն օրվան, երբ Բաշար Ասադի վարչակարգը կկորցնի քիմիական զինանոցի վերահսկողությունը:

Դեկտեմբերի սկզբին Արեւմուտքի մամուլում ի հայտ եկան հաղորդումներ, որոնց համաձայն սիրիացի զինվորականները սկսել են հրետանային արկերը լիցքավորել զարին քիմիական նյութով: Այն պնդումն է արվում, թե սիրիական բանակը քիմիական զենքը կենտրոնացնում է Դամասկոսի, Յոմսի եւ Յալեպի շրջակայքում գտնվող երեք օբյեկտներում:

Ինչ վերաբերում է թուրք-սիրիական սահմանի մոտ տեղաբաշխվելիք «Փեթրիոթ» հրթիռներին, բրիտանական «Գարդիան» թերթը հաղորդում է, որ հակաօդային պաշտպանության ռազմավարական այդ համալիրները սահմանի մոտ կտեղաբաշխվեն «առաջիկա շաբաթներին»: Նման հայտարարությամբ հանդես է եկել ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս ֆոգ Ռասմուսենը:

«Ալ Ջազիրա» հեռուստաալիքի տվյալներով, ՆԱՏՕ-ն նախատեսում է Թուրքիայում տեղաբաշխել հակաօդային պաշտպանության 10 մարտկոց, որոնք կկարողանան պաշտպանել փաստորեն ամբողջ թուրք-սիրիական սահմանը: «Փեթրիոթ» համալիրները կարող են մինչեւ 100 կմ հեռավորության վրա հայտնաբերել եւ ոչնչացնել զանազան օդային թիրախներ: Սպասվում է, որ Թուրքիա կուղարկվեն մարտկոցներ Յոլանդիայից, Գերմանիայից եւ ԱՄՆ-ից:

ՊԵԿԻՆ

# ՉԺՅ Կոմկուսը կձերբազատվի ավելորդություններից



**Չինաստանի Կոմունիստական կուսակցության նոր առաջնորդները մտադիր են ավելի համեստ ձեւով ներկայանալ հանրությանը եւ հրաժարվել երկարաշունչ պաթոսային ճառերից: Այդ մասին հաղորդում է «Սինհուա» գործակալությունը: Յամապատասխան որոշումն ընդունվել է կուսակցության քաղբյուրոյի վերջին նիստում:**

**Մասնավորապես որոշված է հրաժարվել կարմիր ուղեգորգերից, հսկայական պաստառներից եւ այլն: ՉԿԿ ղեկավարության անդամներին նաեւ կոչ է արվել խուսափել երկարատեւ, ձանձրալի, ոչինչ չասող ճառերից եւ խոսել միայն ըստ էության:**

**Ընդհանուր առմամբ, քաղաքներում ՉԿԿ առաջնորդների տեղաշարժերը նույնպես պետք է իրականացվեն հնարավորինս աննկատ ձեւերով, նվազագույնի հասցնելով ճանապարհների փակումները:**

**Կոմկուսի առաջնորդները նախատեսում են պայքարել նաեւ ավելորդ ձեւականությունների դեմ: ՉԿԿ անդամների մասնակցությամբ իրականացվող բոլոր միջոցառումների բյուջեները մանրակրկիտ ձեւով կստուգվեն, իսկ խախտողները կպատժվեն, նշվում է քաղբյուրոյի հայտարարության մեջ:**

**Վերափոխումները պայմանավորված են իշխանավորների պարելակերպից ՉԺՅ քաղաքացիների հարաճուն դժգոհությամբ, նշում է բրիտանական «Գարդիան» թերթը: Վերջին տարիներին ՉԿԿ-ում նույնիսկ ոչ շատ բարձր ղեկավար պաշտոններ զբաղեցնողները իրենց շրջապատել էին շքեղությամբ եւ չէին խորշում դրա ցուցադրությունից:**

**Այս ամենը նկատի ունենալով, Կոմկուսի նոր ղեկավարությունը խնդիր է առաջադրել վերականգնելու բնակչության վստահությունը եւ բարելավելու սեփական նկարագիրը ոչ միայն երկրի ներսում, այլեւ՝ արտերկրում: Ընդսմին, կուսակցության առաջնորդները ջանում են իրենք եւս լինել ընդօրինակման արժանի անձինք, նշում է «Գարդիանը»:**

# Մուրսին փախել է նախագահական պալատից

Եգիպտոսում շարունակվում են բնակչության բողոքի զանգվածային ելույթները նախագահ Մուհամմեդ Մուրսիի նոյեմբերի 22-ին ընդունած հրամանագրերի կապակցությամբ, որոնք անչափ լայն իրավասություններ են տալիս նախագահին: Կահիրեի «Թահրիր» հրապարակում մեկը մյուսի հետեւից ելույթներ են ունենում ընդդիմության գործիչները: Դեկտեմբերի 4-ի երեկոյան մոտ 100 հազար մարդ էր մասնակցում Մուրսիի դեմ ուղղված բողոքի ցույցին: Ցուցարարները մոտեցել են նախագահական պալատին եւ պահանջել են չեղյալ հայտարարել սահմանադրության ուղղումները, որոնք «փարավոնի» կարգավիճակ են տալիս երկրի նախագահին:

Երբ նախագահական նստավայրի մոտ հավաքվել են տասնյակհազարավոր ցուցարարներ, նախագահը որոշել է շենքից հեռանալ կողային մուտքերից մեկով: Վարչակազմի աղբյուրներից մեկը «Ռոյթեր» գործակալության թղթակցին ասել է, որ Մուրսիի փախուստը կազմակերպվել է անվտանգության նկատառումներով:

Յաղորդվում է, որ ցուցարարները քարեր են նետել ոստիկանների վրա, իսկ վերջիններս օգտագործել են արցասաբեր գազ: Բազմաթիվ ցուցարարների հաջողվել է ճեղքել փշալարերից սարքված արգելափակոցները, ինչպես նաեւ հափշտակել ոստիկանական երկու զրահամեքենա:

Նախագահի հակառակորդները հարձակվել են նաեւ կառավարող «Ազատության եւ արդարության» կուսակցության կենտրոնակայանի վրա: Այդ կուսակցությունը «Մուսուլման եղբայրներ» իսլամիստական շարժման քաղաքական թեւն է: Ցուցարարներին չի հաջողվել ներխուժել կենտրոնակայան, բայց շենքին զգալի վնաս է պատճառվել: Ոստիկանության հետ բախումների ժամանակ վիրավորվել է 19 ցուցարար:

Բողոքի բազմահազարանոց ցույցեր են անցկացվել նաեւ Ալեքսանդրիայում եւ մի շարք այլ քաղաքներում: Մուրսիի եւ նրա կողմնակիցների այն հույսերը, թե բողոքի ցույցերն աստիճանաբար կմեղմանան, չեն արդարացել: Ամեն անգամ ընդդիմությանը հաջողվում է հրապարակներում հավաքել տասնյակհազարավոր ակտիվիստների:

Ներկայիս ճգնաժամը նախագահ Մուրսիի համար ամենալուրջ փորձությունն է ամռանը նրա ընտրվելուց ի վեր: Նախագահին օրենքից բարձր դասող հրամանագրերը եւ շարիաթի կանոններին համապատասխան կազմված Եգիպտոսի նոր սահմանադրության նախագիծը նախագահական իշխանությունն ամրապնդելու փոխարեն միավորեցին երկրի ընդդիմությանը:

***Օրերս Երեւանում կայացավ ոգեկոչման երեկո՝ Հարություն Դելլալյանի 75-ամյա հոբելյանին նվիրված համերգը, որտեղ հնչում էին նաեւ Կոմիտասի գործերը: Ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում հարցազրույցը «Տաղարան» հնագույն երաժշտության համույթի ղեկավար Սեդրակ Երկանյանի հետ:***

# Սեդրակ Երկանյան

## «Սույն համերգը ինչ համար կարծես մեր հոգիների երկխոսության առիթ լիներ»



**- Որպես այդպիսին վերոհիշյալ համերգով կարծես թե յուրօրինակ սկիզբը դրվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ միջոցառումների շարքին: Կխնդրեինք մեր ընթերցողներին ներկայացնել Ձեր տպավորությունները:**

- Դելլալյանի հոբելյանական համերգը ոչ թե սկիզբը դարձավ, այլ մաս կազմեց Հայոց եղեռնի հարյուրերորդ տարելիցին ընդառաջ համերգային ծրագրերին: Յուրաքանչյուր հոբելյանական համերգ, կարծում եմ, հիշարժան է դառնում ողջ համերգային համայնապատկերում: Ինձ համար Դելլալյանին նվիրված համերգը ավելին էր նշանակում, քանզի ինձ բախտ էր վիճակվել դառնալ նրան մոտ կանգնած (թեեւ՝ նրա կյանքի վերջին երեք տարիներին) երաժիշտ կատարողներից մեկը, որ կարող էր ամեն մի կատարողական մանրամասնի առումով անմիջականորեն կիսվել հեղինակի հետ, զգալ ու ապրել հեղինակային նրբերանգները, մոտեցումները: Հարությունի հետ ծանոթանալուց ի վեր ես իմ մենահահամերգներում, որպես դաշնակահար, գրեթե մշտապես ներառել եմ նրա սոնադի՝ հայ ժողովրդի պատմական իրադարձությունների, դրամաների, աղետների, հույսի եւ լույսի պատմիչը, թարգմանիչը, ավետաբանիչը: Դրանով հանդերձ, իրավամբ ձեռք բերելով համազգային ու համամարդկային հնչողություն, դառնալով ողջ մարդկության սեփական անդրադարձը:

**- Ի՞նչն էր Ձեր համար հատկապես հիշարժան Հարություն Դելլալյանի հետ շփումների ընթացքում:**



…ար նվիրված Կոմիտասին, ուր էլ որ նվագած լինեմ՝ Հայաստանում, նախկին խորհրդային երկրներում, զանազան այլ երկրներում:

**- Հարություն Դելլալյան-կոմպոզիտորը ունեցավ կարճ կյանք եւ քիչ գործեր հասցրեց գրել, որոնք ըստ իս, այդուհանդերձ, հրաշալի ստեղծագործություններ են: Այսօր արդեն շատերն են տեղեկանում այդ տաղանդավոր մարդու մասին: Ի՞նչ պետք է անել, որպեսզի նրա գործերը ավելի լայն տարածում գտնեն:**

- Դելլալյանի գործերը արժանիորեն պետք է առավել հաճախ կատարվեն. ոչ միայն մեզանում՝ Հայաստանում, այլ նաեւ արտասահմանյան երկրներում: Դրա համար հարկավոր են իր երաժշտությանը անվերապահորեն նվիրված երաժիշտներ, կատարողներ, որոնք իրենց անձնական նվիրումի ներուժով կկարողանան տարածել եւ ունկնդիրների առավել լայն շրջանակների ծանոթացնել, պրոպագանդել, իմ կարծիքով, մեր ժամանակների ամենահետաքրքրական հայ կոմպոզիտորներից մեկի արվեստը.

**- Ո՞րն է Հարություն Դելլալյանի դերը հայ մշակույթի համար:**

- Դելլալյանի արվեստը, որտեղ անձնական մարդկային հույզերի, խոհերի, մտածմունքների կրողն է, ավելիով բազմապատկվելով դառնում է մի ողջ ժողովրդի՝ …

**Դելլալյանի հետ շփումների ընթացքում:**

- Սույն համերգը ինձ համար կարծես մեր հոգիների երկխոսության առիթ լիներ: Ես վստահ էի, որ Հարությունի ոգին ճախրում էր դահլիճում. մեր՝ կատարողներիս գլխավերեւում. եւ իր գոհունակ ժպիտով քաջալերում մեզ՝ կատարողներիս: Իմ կյանքում կան մարդիկ, որոնք դարձել են իմ ճանապարհի մշտական ուղեկիցները, դրանք իմ ծնողներն են, հատկապես իմ մեծ մայրը՝ տատս, դաշնամուրի ուսուցչուհիս: Այս մտերիմներիս իր ուրույն եւ անկրկնելի աշխարհով միացավ նաեւ Հարություն Դելլալյանը՝ թե՛ որպես մարդ, թե՛ որպես, մանավանդ, կոմպոզիտոր:

ԱՐԹՈՒՐ ՂՈՒԿԱՍՅԱՆ

# Ֆինանսիստի հոգեւոր գործը

Նյութի գերիշխանության ներքո գտնվող սպառողական հասարակության մեջ հեշտ չէ հանդիպել հոգեւոր արժեքները գնահատող մարդկանց, իսկ դրամի հետ գործ ունեցող բանկային ծառայողների շրջանում, թվում է, դա անհնար է: Բայց Գրիգոր Մովսիսյանը լինելով «Արմսվիսսբանկ»-ի ֆինանսական տնօրենն ու իր գործի գիտակը, ապրում է նաեւ հոգեւոր կյանքով, եւ դժվար է ասել, թե իրականում նժարի ո՞ր կողմն է ավելի ծանր կշռում իր էության մեջ: Նա ամեն օր Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում պարտադիր մասնակցում է առավոտյան ժամերգություններին,կազմակերպում է արշավներ դեպի լեռներում թաքնված մեր հրաշք եկեղեցիները, լուսանկարում եւ ամենքիս ուշադրությունն է հրավիրում վթարային վիճակի, խնամքի կարոտ եւ շատերին էլ անհայտ եկեղեցիների վրա ...:

Վերջերս Գրիգոր Մովսիսյանը մի ուշագրավ անակնկալ մատուցեց հանրությանը: Նրա «Վահագնի ծնունդը կամ մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը» գրքի գինեձոնն էր, որին ներկա էին հանրապետության մշակույթի եւ հասարակական գործիչներ, ՀՀ սփյուռքի նախարարը:

Ինչպես շարադրված է գրքում, հեղինակին երկար ժամանակ հանգիստ չի տվել այն միտքը, թե «Վահագնի ծնունդը» բանաստեղծությունը դյուցազներգություն է՝ նվիրված հեթանոսական աստծուն: Եվ ահա, Մեծ Պահքի շրջանում պահեցողությանը զուգահեռ աստվածաշնչյան վերընթերցումները նրան հանգեցրել են այն մտքին, որ բանաստեղծությունը խտապատկերն է Սուրբ Գրքի ողջ խորհրդի՝ այն հայտնությունն է մեր Տիրոջ երկրորդ գալստյան, Նրա արդար դատաստանի իրականացման եւ լուսեղեն նկարագրի:

Ընթերցելով գիրքը նախ զարմանք ես ապրում, որ մինչ օրս որեւէ անդրադարձ չի եղել բանաստեղծության առնչությանը Սուրբ գրքին, արժեւորում եւ կարեւորում ես Մովսիսյանի գործը: Իսկ հետո արդեն սկսում ես խորհել, արդյո՞ք Աստվածաշունչն է իր ազդեցությունը թողել ստեղծագործության վրա, թե՞ երգ-բանաստեղծությունն առաջինը թղթին տված մեր Պատմահայրն է որոշակի սուրբգրային երանգավորում տվել նրան: Գուցե մարդկության բնօրրան բիբլիական մեր Արարատ երկրի մարդկանց խոսքն ու բա՞նն է իր միանգամայն հնարավոր հետքը թողել բուն Աստվածաշնչի վրա: Գրիգոր Մովսիսյանը նույնպես տեսակետ չի հայտնում այս առումով, այն թողնելով ընթերցողներիս, սակայն տպավորությունն այն է, թե այնուամենայնիվ նա հակված է կարծելու, որ իր իսկ խոսքերով՝ «այս փոքրիկ բանաստեղծության միջոցով մեր շուրթերով անդադար հնչեցրած Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը» մեր հինավուրց ժողովրդի ծոցից ելած մի մարգարեություն է:

Գրքի էջերը նկարազարդված են գեղանկարիչ Մայիս Մխիթարյանի կողմից: Այստեղ պետք է հիշել շնորհաշատ նկարչի իրագործմամբ Գրիգոր Մովսիսյանի մեկ այլ ուշագրավ մտահղացման մասին: Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու բեմի վարագույրն իր եզակի շքեղությամբ շատերին է հիացնում: Նրա վրա ասեղնագործված են հինգ հրեշտակներ՝ քերովբեներ եվ սերովբեներ՝ խոշոր, ամենատես աչքերով ու թռիչքի պատրաստվող վեցական թեւերով: Վարագույրը եռագույն է՝ կարմիր, կապույտ ու ծիրանագույն: Իսկ հետաքրքրականն այն է, որ վարագույրի գունային այսպիսի ընտրությունը Մովսիսյանը կատարել է հենց Աստվածաշնչից, ուր Բարձրյալը պատվիրում է Մովսես Մարգարեին կառուցելու առաջին աղոթատեղին. «Նրբահիւս բեհեզից, կապոյտ, ծիրանի եւ կրկնակի կարմիր կտաւից տաս շերտանի վարագոյրով խորան կը պատրաստես: Այն կը զարդարես ասեղնագործ քերովբէներով» (Ելից 26:1):

Հաջողություն մաղթենք Գրիգոր Մովսիսյանին իր հետագա գործունեության մեջ՝ ֆինանսական թե ազգային-հոգեւոր բնագավառներում, եւ թող շատանան նրա գործերն՝ ի շահ հայապահպան մեր եկեղեցու:

ԱՇՈՏ ՎԱՎՅԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# Սայաթ-Նովայի 300-ամեակը

## Նիւ Եորքի Ս. Նահատակաց դպրոցում



**Օրերս Նիւ Եորքի Սրբոց Նահատակաց ամէնօրեայ վարժարանի Գալուստեան սրահում մեծ շուքով նշուեց Սայաթ-Նովայի ծննդեան 300-ամեակը: Ձեռնարկը բացեց վարժարանի տնօրէնուհի Զարմինէ Պողոսեանը, որը սահիկների ցուցադրութեամբ ներկայացրեց Սայաթ-Նովայի կեանքն ու ստեղծագործական ուղին: Այնուհետեւ ներկայացրեց գեղարուեստական բաժնի յայտագիրը: Առաջինը ելոյթ ունեցան վարժարանի աւարտական դասարանի աշակերտները, որոնք Սայաթ-Նովայի երաժշտութեան հետ պարելով սրահ մտան՝ մեծ աշուղի սիրած «կրակի գոյն» հայկական տարազներ հագած: Ապա բեմ բարձրանալով ողջունեցին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Տէր Աբրահամ Քհնյ. Մալխասեանը, Հայ Կաթողիկէ համայնքի նորանշանակ հովիւ՝ Հոգշ. Թովմաս Վրդ. Կարապետեանը, պատուոյ հիւրերն ու մշակութասէր ներկաները: Ապա ներկայացուցին Սայաթ-Նովայի «Գիր սիրէ, ղալամ սիրէ, տաֆթար սիրէ» բանաստեղծութիւնը (երկլեզու):**

**Յայտագրին երաժշտական բաժինը սկսաւ Սայաթ-Նովայի երգերով մեցցօ սոպրանօ Յասմիկ Մէյխանեճեանի կատարողութեամբ եւ Նուարդ Տասնուրեանի նուագակցութեամբ: Յաջորդաբար Սայաթ-Նովայի մի շարք բանաստեղծութիւնները հնչեցին Երեւանի Գ. Սունդուկեանի անուան թատրոնի նախկին՝ վաստակաշատ դերասանուհի եւ «Սփիւռքի Ձայն-VOAD» հեռատեսիլային կայանի տնօրէնուհի Կարինէ Քոչարեանի կատարմամբ: Փոխնիփոխ նոյն ստեղծագործութիւնները անգլերէնով կարդաց համայնքիս ծանօթ ասմունքող եւ բեմադրիչ Լուսինէ Ճըճրեանը:**

**Տաղանդաւոր դաշնակահարուհի Կարինէ Պողոսեանն իր խուրայատուկ մեկնաբանութեամբ ներկաներուն մատուցեց Առնօ Բաբաջանեանի «Էլեգիան» հրամցնելով:**

**Յայտագրի աւարտին երէցկին Կարինէ Մալխասեանին մասնակցութիւնը իր գեղեցիկ սոպրանօ ձայնով հաճելի ու տպաւորիչ նուրութիւն էր համայնքի հանդիսատեսներուն համար:**

**Նոյն օրը ներկաները վայելեցին նաեւ ամերիկահայ ճանաչուած լուսանկարիչ, Նիւեորքաբնակ Ռոբերտ Կարապետեանի լուսանկարների ցուցահանդէսը, որտեղ հեղինակը ներկայացրել էր 2011թ. սեպտեմբերի 21-ին ՀՀ անկախութեան 20-ամեակին նուիրուած տօնախմբութիւնները՝ Երեւանում:**

**Ռոբերտ Կարապետեանին շնորհաւորեցին եւ շնորհակալական խօսք ասացին վարժարանի տնօրէնուհի Զարմինէ Պողոսեանը, ամերիկահայ հանրաճանաչ գրող-դրամատուրգ, Հայաստանի գրողների միութեան անդամ դոկտոր Հրանդ Մարգարեանը, ճանաչուած խմբավար, վաստակաւոր արտիստ պրոֆ. Խորէն Մէյխանեճեանը, հայ համայնքի տարբեր ներկայացուցիչներ, լուսանկարչի ընկերներն ու հարազատները:**

**Ցուցահանդէսը մի քանի օր կը ցուցադրուի վարժարանում: Այն հիանալի ուսուցողական բնոյթի ցուցադրութիւն է, որին կը ծանօթանան վարժարանի սաները:**

ԱՇԽԷՆ ԳԷՈՐԳԵԱՆ
Նիւ Եորք
Լուսանկարը՝
Իվետա Կարապետեանի

# «Շարժվելով առաջ...»

**«Նարեկացի» արվեստի միությունում այս անգամ «Մանանա» մանկապատանեկան, կրթամշակութային կենտրոնի սաները ներկայացրեցին լուսանկարչական աշխատանքներ՝ «Շարժվելով առաջ...» խորագրով:**



**Ցուցադրված էին չորս տասնյակ լուսանկարչական աշխատանքներ՝ ֆոտոժուռնալիստիկայի ստուդիայի 11-19 տարեկան պատանի լուսանկարիչների կողմից, որոնք արված էին ոչ միայն ժամանակակից թվային ֆոտոխցիկներով, այլեւ հին ժապավենային խցիկներով: Ի դեպ, սեւ ու սպիտակ լուսանկարները երեխաներն իրենց ուժերով, ստուդիայի լաբորատորիայում երեւակել եւ տպագրել էին: Ցուցահանդեսին ներկայացվեց նաեւ անիմացիոն ստուդիայի աշխատանքները՝ ֆիլմեր ստեղծված ամենատարբեր տեխնիկական միջոցներով. ավազով, կտրտած պատկերներով, փեքսիլացիոն տեխնոլոգիայով:**

**Նշենք, որ «Մանանա» մանկապատանեկան կրթամշակութային կենտրոնը գործում է 1995 թ.-ից, զբաղվում է երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացմամբ եւ մեդիակրթությամբ: Կենտրոնն ունի չորս ստուդիա. ստեղծագործական արվեստանոց, ուր զարգանում է երեխաների գրական ունակություններն ու ստեղծագործական երեւակայությունը, ֆոտոժուռնալիստիկայի ստուդիա, անիմացիոն եւ կինո ստուդիաներ, ուր հաճախում են 8-22 տարեկան մանուկներ ու երիտասարդներ, որոնք ստեղծում են իրենց ֆիլմերը, անիմացիաներն ու լուսանկարները: Կենտրոնն այսօր շուրջ 150 ֆիլմ ունի նկարված, մի շարք միջազգային կինոփառատոների հաղթող է: Հրատարակում է «Խաբարբզիկ» ամսագիրը, որն ամբողջությամբ կազմված է երեխաների ստեղծագործություններից՝ տեքստերից, լուսանկարներից ու իլյուստրացիաներից:**

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Եվրոպայի չեմպիոն Ռուսաստանի հավաքականի կազմում

## Զորիկ Պողոսյանն արժանացավ փոքր բրոնզե մեդալի

Իսրայելում ընթացող ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում պայքարն ավարտեցին մինչեւ 69 կգ քաշային ծանրորդները: Մինչեւ 23 տարեկան ծանրորդների մրցավեճում գերազանց հանդես եկավ Ռուսաստանը ներկայացրած Արմեն Ալեքյանը, որը երկամարտի 317 կգ (142+175) արդյունքով նվաճեց Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Արմենը վստահ կատարեց բոլոր 6 մոտեցումներն էլ ու արժանիորեն դարձավ չեմպիոն: Պոկում վարժությունում նա 142 կգ-ով արժանացավ արծաթե մեդալի: Ոսկին նվաճեց ռուսաստանցի Ֆելիքս Խալիբեկովը, որը ցույց տվեց 145 կգ արդյունք: Իսկ հրում վարժությունում Ալեքյանի արդյունքը լավագույնն էր ու նա փոքր ոսկե մեդալ նվաճեց:




Հայաստանը քաշային այս կարգում ներկայացրած Զորիկ Պողոսյանը երկամարտի 300 կգ (135+165) արդյունքով գրավեց 5-րդ տեղը: Պոկում վարժությունը Զորիկը սկսեց 130 կգ-ից, ապա հաջողությամբ բարձրացրեց 135 կգ-ը, իսկ 138 կգ-ը հաղթահարել չկարողացավ: Այս վարժությունում հայ ծանրորդը գրավեց 5-րդ տեղը:

Նա ավելի հաջող հանդես եկավ հրում վարժությունում: Ճիշտ է, 3 մոտեցումներից միայն մեկը Պողոսյանը հաջող կատարեց՝ բարձրացնելով 165 կգ, սակայն դա էլ բավարար էր փոքր բրոնզե մեդալ նվաճելու համար: Նույնպիսի արդյունք էին ցույց տվել նաեւ ռուսաստանցի Ֆելիքս Խալիբեկովն ու չեխ Պետեր Պետրովը, սակայն նրանք անձնական քաշով ավելի ծանր էին հայ ծանրորդից, ուստի մրցանակակիր դարձավ Զորիկը: Եվրոպայի առաջնությունում դա Հայաստանի հավաքականի 2-րդ բրոնզե մեդալն էր: Մինչ այդ փոքր բրոնզե մեդալի էր արժանացել Իզաբելա Յայլյանը:

Մինչեւ 69 կգ 20 տարեկան ծանրորդների մրցավեճին Հայաստանից մասնակցեց Վլադիկ Կարապետյանը: Նա շատ վատ հանդես եկավ՝ 9 ծանրորդների մեջ երկամարտի 290 կգ (130+160) արդյունքով գրավելով 8-րդ տեղը:

Պոկում վարժությունում նա հաջող կատարեց առաջին 2 մոտեցումները՝ հաջորդաբար բարձրացնելով 125 եւ 130 կգ: Այդ արդյունքն ամենացածրն էր մասնակիցների մեջ: Հրում վարժությունում էլ առաջին մոտեցմամբ բարձրացնելով 160 կգ, Վլադիկը չկարողացավ իրեն ենթարկել 165 կգ-անոց ծանրաձողը:

Չեմպիոն հռչակվեց ադրբեջանցի Ֆիրիդուն Գուլիեւը, որը երկամարտում ցույց տվեց 316 կգ (136+180) արդյունք: Նա փոքր ոսկե մեդալ նվաճեց նաեւ հրում վարժությունում, իսկ պոկումում 4-րդն էր: Այս վարժությունում լավագույն արդյունքը ցույց տված վրացի Գեորգի Լոմտաձեն երկամարտի 310 կգ (143+167) արդյունքով դարձավ բրոնզե մեդալակիր: Իսկ արծաթե մեդալը երկամարտի 314 կգ (142+172) արդյունքով բաժին հասավ մոլդովացի Արտյոմ Պիպային:

# «Զենիթն» ու «Այաքսը» Եվրոպայի լիգայի ուղեգիր նվաճեցին

Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի 4 խմբերում ավարտվեցին խմբային մրցաշարի հանդիպումները: Վերջնականապես հայտնի դարձան այն 8 երջանիկ թիմերը, որոնք պայքարը կշարունակեն չեմպիոնների գավաթի համար: Խմբերում 3-րդ տեղը գրաված ակումբներն էլ իրավունք ստացան հանդես գալու Եվրոպայի լիգայի մրցաշարում:




A խմբում երկու առաջատարների՝ ՊՍԺ-ի եւ «Պորտոյի» մրցավեճում մնում էր որոշել, թե թիմերից որ մեկն է գրավելու առաջին տեղը: 2 թիմերն էլ ժամկետից շուտ նվաճել էին հաջորդ փուլի ուղեգիրը: Հաջողությունն ուղեկցեց ֆրանսիացիներին, որոնք հաղթելով 2-1 հաշվով, շրջանցեցին «Պորտոյին» եւ մրցաշարն ավարտեցին 1-ին տեղում:

Զագրեբում տեղի ու Կիեւի դինամոյականների մրցավեճն այլեւս ոչինչ չէր որոշում: «Դինամոն» ապահովել էր իր տեղը Եվրոպայի լիգայի մրցաշարում: Իսկ դաշտի տերերը մինչ այդ հանդիպումը դեռեւս միավոր չէին վաստակել: Այդ խաղում էլ Զագրեբի «Դինամոն» հայտնվել էր պարտության վտանգի առջեւ: Առաջին խաղակեսի ավարտին հյուրերից Յարմոլենկոն առաջ էր մղել Կիեւի «Դինամոյին»: Եվ միայն ավելացված ժամանակի 5-րդ րոպեին դաշտի տերերը, իրացնելով 11 մ հարվածը, խուսափեցին պարտությունից եւ առաջին միավորը վաստակեցին:

B խմբում էլ մնում էր որոշել 1-ին տեղի հարցը: Խմբի հաղթող դարձավ գերմանական «Շալկե-04-ը», որը հյուրընկալվելիս ոչ-ոքի (1-1) խաղաց «Մոնպելյեի» հետ: «Շալկե-04-ը» վաստակեց 12 միավոր: 2-րդ տեղում ընթացող «Արսենալը» ոչ հիմնական կազմով հյուրընկալվելիս 1-2 հաշվով զիջեց «Օլիմպիակոսին», որը կշարունակի պայքարը Եվրոպայի լիգայում:

C խմբում միակ ինտրիգը 3-րդ տեղի համար պայքարն էր, որն իրավունք էր տալիս մասնակցելու Եվրոպայի լիգայի մրցաշարին: Այդ պայքարում հաջողությունն ուղեկցեց «Զենիթին», որը հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեց «Միլանին»: Վերջինս 8 միավորով իր համար վաղուց էր ապահովել 2-րդ տեղն ու հաջորդ փուլի ուղեգիրը: Իսկ խմբի հաղթող ճանաչվեց իսպանական «Մալագան»՝ սեփական հարկի տակ ոչ-ոքի (2-2) խաղալով «Անդերլեխտի» հետ:

D խմբում էլ մնում էր որոշել Եվրոպայի լիգայի մրցաշարի մասնակցին: Ուղեգրին հավակնում էին «Մանչեսթր Սիթին» ու «Այաքսը»: Անգլիայի չեմպիոնն անհաջողության մատնվեց՝ Դորտմունդում 0-1 հաշվով զիջելով տեղի «Բորուսիային»: «Այաքսն» էլ թեեւ Մադրիդում 1-4 հաշվով պարտվեց «Ռեալին», սակայն վաստակած 4 միավորով գրավեց 3-րդ տեղը: Իսկ խմբի հաղթողը 14 միավորով «Բորուսիան» է: «Ռեալը» 11 միավորով գրավեց 2-րդ տեղը:

## Վարուժան Հակոբյանն՝ ԱՄՆ-ի չեմպիոն

**Armchess.am-ի տեղեկացմամբ գրոսմայստեր Վարուժան Հակոբյանը «Սիեթլ» թիմի կազմում նվաճել է ԱՄՆ-ի շախմատի թիմային առաջնության չեմպիոնի տիտղոսը: Նա թիմի կազմում հանդես եկավ 1-ին խաղատախտակի վրա:**

ՇԱԽՄԱՏ

# Արոնյանն առաջին հաղթանակը տոնեց

**Լոնդոնի մրցաշարում անհաջող մեկնարկած Լեւոն Արոնյանը վերջապես վայելեց հաղթանակի բերկրանքը: 4-րդ տուրում հայ շախմատիստը սեւերով հաղթեց անգլիացի Լյուկ Մակշեյնին: 4 տուրից հետո Արոնյանը նույնքան միավորով 5-րդ տեղում է:**

**Մրցաշարի միանձնյա առաջատար դարձավ նորվեգացի Մագնուս Կառլսենը՝ հաղթելով Գավեյն Ջոնսին: Կառլսենը վաստակեց 10 միավոր: 8 միավորով 2-րդ տեղում Վլադիմիր Կրամնիկն է, որը ոչ-ոքի խաղաց Վիշվանաթան Անանդի հետ: Լավագույն եռյակը եզրափակում է 7 միավոր վաստակած Մայքլ Ադամսը, որը հաշտություն կնքեց Հիկարու Նակամուրայի հետ:**

**Այսօր կայանալիք 5-րդ տուրում Լեւոն Արոնյանը խաղից ազատ է: Կկայանան Կրամնիկ-Մակշեյն, Ջոնս-Անանդ, Ադամս-Կառլսեն եւ Պոլգար-Նակամուրա հանդիպումները:**

# Մելքումյանը շարունակեց հաղթարշավը

**Հրանտ Մելքումյանը շարունակեց հաղթարշավը Լոնդոնի բաց մրցաշարում: 4-րդ տուրում նա պարտության մատնեց Ջոն Շավին: Հրանտը Անգլիան ներկայացնող Չժոու Յանգի հետ 4 միավորով գլխավորում է աղյուսակը: 5-րդ տուրում առաջատարները կմրցեն միմյանց հետ: Սպիտակներով կխաղա հայ շախմատիստը:**

# Գրիգորյանը պահպանեց առաջատարի դիրքը

**Պավլոդարի շախմատի մրցաշարի 6-րդ տուրում Ավետիք Գրիգորյանը ոչ-ոքի խաղաց Ռինատ Ջումաբաեւի հետ եւ 5 միավորով Պյոտր Կոստենկոյի, Վլադիսլավ Արտեմեւի եւ Անվար Իսմագամբետովի հետ շարունակում է գլխավորել աղյուսակը: 7-րդ տուրում Գրիգորյանը կմրցի Իսմագամբետովի հետ:**

**Հաշտություն կնքեց նաեւ Զավեն Անդրեասյանը, որը մրցում էր Բերիկ Ակոզովի հետ: Զավենը 4,5 միավորով հետապնդում է առաջատարներին: Հովհաննես Գաբուզյանն էլ ոչ-ոքի ավարտեց պարտիան Կիրիլ Կուդերինովի հետ: Նա ունի 4 միավոր: Տուրն անհաջող էր Հրայր Սիմոնյանի համար, որը պարտվեց Կոնստանտին Շանավային: Սիմոնյանը վաստակել է 3,5 միավոր:**

# Բրոնզե մեդալներն ապահոված են

**Երեւանում ընթացող բռնցքամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունում Հայաստանը ներկայացնող 10 բռնցքամարտիկներից ասպարեզում մնացել են միայն 2-ը: Նրանք իրենց համար արդեն նվազագույնն ապահովել են բրոնզե մեդալները՝ մտնելով կիսաեզրափակիչ:**




**Հաջող մրցելույթներն է շարունակում գերծանրքաշային Նարեկ Մելքոնյանը: Նա երեւանյան ռինգում իր 3-րդ մենամարտն էլ հաղթանակով ավարտեց: Նարեկի մրցակիցը խորվաթ բռնցքամարտիկ Յոսիպ Գրանիչն էր: Բոլոր 3 ռաունդներն էլ հայ բռնցքամարտիկի առավելությամբ անցան, որը հաղթեց 14-8 հաշվով ու մտավ կիսաեզրափակիչ: Այս փուլում նրա մրցակիցը կլինի անգլիացի Հյուի Լուիս Ֆերին, որը քառորդ եզրափակիչում 15-5 հաշվով պարտության էր մատնել ղազախ Կանագաս Աիմեդովին:**

**Եզրափակիչի ուղեգրի համար կպայքարի նաեւ մինչեւ 81 կգ քաշային Նիկոլ Հարությունովը, որը 12-7 հաշվով պարտության մատնեց անգլիացի Սթիդ Բառնաբի Վուդոլին: Եզրափակիչի ուղեգիրը հայ բռնցքամարտիկը կվիճարկի ռուսաստանցի Իդրիս Շահմանովի հետ, որը 15-7 հաշվով առավելության էր հասել իռլանդացի Ջո Մաքդոնագ Ջոնի նկատմամբ:**

# Հայաստանը կհյուրընկալի պատանեկան մրցաշարի մասնակիցներին

**Երեկ Շվեյցարիայի Նիոն քաղաքում կայացավ ֆուտբոլի Եվրոպայի 2013/14-ի պատանեկան առաջնության որակավորման առաջին փուլի վիճակահանությունը: Մինչեւ 17 տարեկանների Հայաստանի պատանեկան հավաքականը վիճակահանությամբ ընդգրկվել է 7-րդ խմբում, որտեղ կմրցի Անգլիայի, Իռլանդիայի եւ Ջիբրալթարի պատանիների հետ: Այդ մրցաշարը կկայանա Հայաստանում 2013-ի հոկտեմբերի 23-30-ը:**

**Մինչեւ 19 տարեկանների ՀՀ պատանեկան հավաքականն ընդգրկվել է 2-րդ խմբում, որտեղ մրցակիցներն են Ռումինիայի, Լեհաստանի եւ Լիտվայի հավաքականները: Հանդիպումները տեղի կունենան Լեհաստանում հաջորդ տարվա հոկտեմբերի 9-16-ը:**

# Դեւիդ Բեքհեմի հաղթական հրաժեշտը

**«Լոս Անջելես Գելեքսին» 2-րդ տարին անընդմեջ նվաճեց ԱՄՆ-ի ֆուտբոլի չեմպիոնի տիտղոսը: Ինչպես նախորդ տարի, այս անգամ էլ եզրափակիչում Դեւիդ Բեքհեմն ու իր թիմակիցները հաղթեցին «Հյուստոն-Դինամոյին»՝ 3-1: Ընդհանուր առմամբ «Լոս Անջելես Գելեքսին» 4 անգամ է արժանացել երկրի չեմպիոնի տիտղոսին:**

**Այդ խաղը «Լոս Անջելես Գելեքսիի» կազմում 37-ամյա Դեւիդ Բեքհեմի վերջին ելույթն էր: Նա դեռեւս կիսաեզրափակիչ խաղից հետո էր հայտարարել, որ մրցաշրջանի ավարտից հետո հեռանալու է թիմից:**

**Հաղթական խաղից հետո Դեւիդ Բեքհեմը հետեւյալն է ասել. «Առաջնության եզրափակիչ խաղում հաղթելը մեծ պատիվ է ինձ համար: Այսօր հիանալի օր է, սակայն մի փոքր տխուր եմ, քանի որ հեռանում եմ թիմից ու այլեւս չեմ կրի հարազատ դարձած ակումբի մարզաշապիկը: Սակայն կշարունակեմ զարգացնել ֆուտբոլն այս երկրում, կմասնակցեմ լիգայի գործերին: Կարծում եմ, որ նախորդ տարիների համեմատ իմ ավանդը չի նվազի»:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# «Խնդրողական» Ադրբեջան. բայց...

*1-ին էջից*

**Նախ, ի՞նչ կապ կարող է ունենալ «Ադրբեջանի օդային տարածքը» Իրանում ենթադրյալ ռազմական գործողությունների հետ: Մուսաբեկովն այս կետը չի՞ մասնում, որ Իրանի դեմ ռազմական գործողությունների դեպքում Ադրբեջանը կլինի Արեւմուտքի եւ ԱՄՆ-ի դաշնակիցը, ինչը համառոտեն հերքում է իր երկրի ԱԳՆ-ն: Երկրորդ, «նույն հաջողությամբ կարող են խփվել» նաեւ Բաքվից Նախիջեւան թռչող օդանավերը, որոնք հատում են կամ Հայաստանի, կամ Իրանի օդային տարածքը: Երրորդ, Մուսաբեկովը փաստորեն խոստովանում է, որ Ստեփանակերտի օդանավակայանի վերագործարկմանը խոչընդոտելու հարցում Ադրբեջանը որեւէ հիմնավոր փաստարկ պարզապես չունի եւ ստիպված է դիմել հիրոթեցիկ «իրավիճակներով պայմանավորված» շանտաժի:**

**Բայց նույնիսկ այդ դեպքում «հայտնի քաղաքագետի տրամաբանությունը» մատնել է նրան, դրել հիմար վիճակում: «Իսկ որքանո՞վ են հավանական Իրանի դեմ ռազմական գործողությունները» հարցին, որ առաջադրվել է նրան, Մուսաբեկովը պատասխանել է. «Օբամայի՝ երկրորդ անգամ ԱՄՆ նախագահ ընտրությամբ ռազմական սցենարը մղվել է երկրորդ պլան, մթնոլորտը կողմնորոշված է դեպի բանակցություններ: Չեմ կարծում, որ Իրանի դեմ պատերազմը հրատապ է»:**

**Այդու՝ հրատապ չէ նաեւ Ստեփանակերտի օդանավակայանի վերագործարկման հարցում Ադրբեջանի «մտահոգությունը, թե մարտական գործողությունների ընթացքում կխփվեն ԼՂՀ թռչող օդանավերը, եւ ոչ ոք դրա համար պատասխանատու չի լինի»: Ինչպես նաեւ՝ հրատապ չէ Իրանի դեմ ռազմական գործողությունների պատրվակն օգտագործելով ԼՂՀ դեմ պատերազմ սանձազերծելու ադրբեջանական ռազմաքաղաքական «հայեցակարգի կիրառումը»: Այս պայմաններում պարզապես չափազանցված է թվում Մուսաբեկովի «իրազեկվածությունը միջնորդների ունեցած նոր գաղափարների եւ դրանք հայկական կողմից չընդունվելու» շուրջը:**

**Իրականություն է, որ Իլհամ Ալիեւը չգիտի, թե ինչո՞վ է հիմնավորելու երրորդ ժամկետով նախագահ ընտրվելու ցանկությունը, չունի հասարակությանը ներկայացնելի գաղափարներ ԼՂ խնդրի կարգավորման մասին: Այդ իսկ պատճառով ընտրել է «դեժավյու տարբերակը»՝ կրկնել այն, ինչ բազմիցս շրջանառվել է, քննարկվել եւ որեւէ արդյունքի չի բերել: Քանի որ այդ ամենը հակասում է և՛ խնդրի տրամաբանությանը, և՛ միջնորդների ընկալումներին, և՛, որ չափազանց կարեւոր է, միջազգային քաղաքական զարգացումների հիմնարար միտումներին:**




## Մրցույթի հրավեր

ՄԱԿ-ի Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) հայաստանյան ներկայացուցչությունը հրավիրում է համապատասխան արտոնագիր ունեցող շինարարական կազմակերպություններին՝ մասնակցելու ՊԳԿ-ի Էրեբունի 12 հասցեում գտնվող գրասենյակային տարածքի վերանորոգման մրցույթին:

Մրցույթի հրավերի մանրամասներին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://operations.undp.am/Procurement/Default.aspx** ինտերնետային կայքից: Մրցութային փաստաթղթերը ձեռք բերելու համար դիմել ՊԳԿ հայաստանյան գրասենյակ. հասցեն՝ ՀՀ, ք. Երեւան, Կառավարական տուն 3, 105 սենյակ: Փաստաթղթերի ձեռք բերման վերջնաժամկետը՝ ս. թ. դեկտեմբերի 17-ը, ժամը 17.00-ն:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս. թ. դեկտեմբերի 27-ը, ժամը 17.00-ն:

ՀՀ, ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից կազմակերպված ընդհանուր բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի Խումբ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

1. Բնակարան, ընդ. մակերեսն է՝ 70.96 ք.մ: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երեւան, Նոր-Նորք համայնք 2-րդ միկրոշրջան, շենք 29, թիվ 16: Լոտի մեկնարկային գինը՝ 18500000 ՀՀ դրամ:

2. Հասարակական նշանակության տարածք, ընդ. մակերեսն է՝ 141.47 ք.մ: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, Էրեբունի, Էրեբունի փողոց, 31 շենք, թիվ 1/1: Լոտի մեկնարկային գինը՝ 57000000 ՀՀ դրամ:

Գույքը գրավադրված է: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է մեկնարկային գների 2%-ի չափով, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ յուրաքանչյուր աճուրդային փուլին նախորդող աշխատանքային օրվա ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդի առաջին փուլը դասական եղանակով՝ 24.12.2012թ-ին ժ. 12:00-ին, այնուհետեւ փուլերը՝ 25.12.2012թ.-ին ժ. 12:00-ին եւ հաջորդող աշխատանքային օրերին նույն ժամին հոլանդական եղանակով, յուրաքանչյուր փուլում մեկնարկային գների իջեցումով, բայց ոչ պակաս հատման գներից: Լոտերը սակարկվելու են ըստ ներկայացված հերթականության: Աճուրդի ավարտը՝ 01.03.2013թ.:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, որի առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտերը կարող են ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ աճուրդի ավարտի օրվանը նախորդող աշխատանքային օրը, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ը՝ վերը նշված հասցեներով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-15 հեռախոսահամարով:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀԿԱ-ՊԵԿ-ՊԸԾՁԲ-13/1**

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք. Երեւան, Մ. Խորենացու 7 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել վարժեցվող շների համար ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչեւ 2012թ. դեկտեմբերի 14-ի ժամը 10:00-ն: Ընդ որում փաստաթղթային ձեւով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձեւով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալու օրը:

Էլեկտրոնային ձեւով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձեւով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երեւան, Մ. Խորենացու 7, 3-րդ հարկ, Գնումների եւ շինարարության բաժին, Մ. Մուրադյանին, փաստաթղթային ձեւով մինչեւ 2012թ. դեկտեմբերի 14-ի ժամը 10:00-ն եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն հրավերի 1-ին մասի 12-րդ բաժնով սահմանված կարգով:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե***

«ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀ բորսայի հարթակում՝ իրականացվում է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Եր անի ֆիզիկայի ինստիտուտ) Հիմնադրամ»-ի կողմից ներկայացված օգտագործված եւ ոչ լրակազմ տրանսպորտային միջոցների աճուրդները՝ դասական եւ հոլանդական եղանակով:

| Անվանում | Մեկնարկային գին, ՀՀ դրամ |
|---|---|
| Մազ-5432, պ/հ 836 SL 65, արտ. 1984 թ. | 1050000 |
| Մազ-93971 կիսակցորդ, պ/հ 43-15 AP, արտ. 1984 թ. | 600000 |
| Մազ-64229, պ/հ 839 SL 65, արտ. 1989 թ. | 1200000 |
| Մազ-9389 կիսակցորդ, պ/հ 43-16 AP, արտ. 1983 թ. | 600000 |
| Մազ-9397 կիսակցորդ, պ/հ 58-94-??, արտ. 1989 թ. | 600000 |
| Ուազ-3741, պ/հ 548 SL 65, արտ. 1991 թ. | 1900000 |
| Մազ-5432, պ/հ 835 SL 65, արտ. 1985 թ. | 1250000 |
| Մազ-93971 կիսակցորդ, պ/հ 14-42 ??, արտ. 1985 թ. | 600000 |
| Ռաֆ-2203, պ/հ 821 SL 65, արտ. 1986 թ. | 350000 |
| Ռաֆ-2203, պ/հ 820 SL 65, արտ. 1987 թ. | 200000 |
| Մազ-5549, պ/հ 551 SL 65, արտ. 1989 թ. | 1250000 |
| Վազ-2121, պ/հ 539 SL 65, արտ. 1986 թ. | 250000 |
| Իժ-2715 1-01, պ/հ 816 SL 65, արտ. 1983 թ. | 250000 |
| Պազ-672-մ, պ/հ 187 SU 65, արտ. 1989 թ. | 300000 |
| Գազ-3102, պ/հ 537 SL 65, արտ. 1985 թ. | 200000 |
| Մազ-64229, պ/հ 838 SL 65, արտ. 1989 թ. | 1200000 |
| Զիլ-431412, պ/հ 549 SL 65, արտ. 1988 թ. | 650000 |
| Իժ-2715-01-11, պ/հ 547 SL 65, արտ. 1991 թ. | 120000 |
| Իժ-2715, պ/հ 817 SL 65, արտ. 1984 թ. | 120000 |
| Գազ-53-14 ԿՍ-413, պ/հ 830 SL 65, արտ. 1989 թ. | 300000 |
| Պազ-672-Մ, պ/հ 822 SL 65, արտ. 1988 թ. | 220000 |
| Ալկա-կիսակցորդ, պ/հ 71-75 ??, արտ. 1988 թ. | 1000000 |
| ԿՍ-5473 Ավտոկռան, պ/հ 827 SL 65, արտ. 1984 թ. | 8250000 |
| Ռաֆ-2203 1, պ/հ 545 SL 65, արտ. 1987 թ. | 170000 |
| Կռազ-250 Կ Ավտոկռան, պ/հ 826 SL 65, արտ. 1986 թ. | 500000 |
| Էլեկտրոսայլակ, արտ. 1986 թ. | 150000 |
| Էսկավատոր ԷՕ-3322, արտ. 1989 թ. | 3000000 |
| Բուլդոզեր ԴԶ 101, արտ. 1986 թ. | 1350000 |
| Ամենագնաց ԳՏ-ՍՄ, ԳԱԶ71, արտ. 1983 թ. | 600000 |
| Ամենագնաց ԳԳ, ԳԱԶ71, արտ. 1983 թ. | 250000 |
| Ավտոամբարձիչ, Բալկան, արտ. 1983 թ. | 400000 |
| Ավտոամբարձիչ 4014 5տ, արտ. 1981 թ. | 200000 |
| Էլ. Ամբարձիչ, Բալկան, արտ. 1986 թ. | 600000 |
| Ջնագնաց Բուռան , 4620 ՉԶ, արտ. 1986 թ. | 100000 |
| Ավտոպիցետ 1Ռ-5, արտ. 1983 թ. | 120000 |
| Ավտոամբարձիչ, 40-45, արտ. 1986 թ. | 500000 |
| Կցորդ ՉՄԶԱՊ, արտ. 1986 թ. | 120000 |
| ԳԿԲ-8 կցորդ, արտ. 1980 թ. | 60000 |
| Ռաֆ-2203, արտ. 1987 թ. | 50000 |
| Իժ-2715, արտ. 1987 թ. | 45000 |

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (010) 56-52-28 կամ այցելել ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե, կամ բորսայի կայք՝ www.borsa.am:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է հետեւյալ լոտը.

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող՝

- ՀՀ, ք. Երեւան, Արաբկիր համայն, Ա. Խաչատրյան փողոց, 12 շենք, թիվ 54 հասցեում գտնվող 76,8 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 32000000 (երեսուներկու միլիոն) ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդը՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1, 3-րդ հարկ հասցեում 24.12.2012 թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլն իրականացվում է նախորդ փուլից 3-րդ օրացուցային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որի վճարման վերջնաժամկետն է 21.12.2012թ., այնուհետեւ յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 12:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, որն առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ 21.12.2012թ., այնուհետեւ յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային or, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.akson.am կայքերը:

Երեւանի «Ադամանդ» ապրանքա-հումքային բորսան իր հարթակում իրականացնում է ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից ներկայացված սպառազինության ոլորտում կիրառվող սարքերի՝ УПС-ТГ, УСКС-2, СА, А30Б-1, УСС, УКВ, УУВ-М, Э-502-80-01, ШД-001 եւ այլ մակնիշի կանգնակների, ինչպես նաեւ ժապավենների ծախսի սարքավորումների, Б8, Б7, ПУ, МВ-Д, ГМ-Д, П-Д, БФД, К-Д, ВКПО-Д, ВП, БПО, БТЗ, ПУ, ПСВЧ 8462-1, ПСВЧ 8138-3, БОИ 66939-1, БОИ 66939-2, БОИ 66946-1, БОИ 66946-2, БОИ 66944-1, БОИ 66944-2, БОИ 66945-1, БОИ 66945-2, БОИ 36513-1, БОИ 36513-2, БГА 65258, БУТ-2005.2, БУТ-2005.1, 2005.2, 2005.1, 2005.4 եւ այլ մակնիշի բլոկների, ША-003 П-115 եւ այլ մակնիշի տպիչ մեքենաների, վահանակների, պահարանների, արկղերի, մոնտաժման լարերի, ռադիոկայանների, մագնիտոֆոնների, ավտոմատացված վահանների եւ այլ բազմանուն գույքի աճուրդային վաճառքը:

Ամբողջական ցանկին, աճուրդի ընթացակարգին ծանոթանալու, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել (010) 56-52-28 կամ այցելել ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե, կամ բորսայի կայք՝ **www.borsa.am**:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝5.12.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: